№ 26 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 7 ՓԵՏՐՎԱՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 7 ՓԵՏՐՎԱՐԻ № 26

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամենուրեքից

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1912** Թ. ՀԱՄԱՐ

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը՝ 2 ր., 1 ամսվանը 85 կ. և 15 կ. պոստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, և մի-ևնոյն ժամանակ 40 կ. նամակադրոշմ։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երեկոյքների կարգ ձմեռային օինուբեան մէջ

Երեքշաբթի օրերը.—Հայոց ներկայացում։
Չինուորական երաժշտութիւն։ Սազանդար։ Պ Ա Ր Ե Ր։

Չորեքշաբթի օրերը. — Ս նէմատօգրաֆ։ Լօտ։

Հինգշաբթի օրերը.—Ռուսաց ներկայացում կամ զինուորական երաժշտութիւն։ Լօտ։

Շաբաթ օրերը.—Սազանդար։ Լօտ։

Կիրակի օրերը.—Սինէմատօգրաֆ։ Զինուորական երաժշտութիւն։ Լօտ։

Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ մուտքի համար վճարում են. երեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ և կիրակի օրերը—տղամարդիկ 1 ր., կանայք 50 կ., ուսանողները 25 կ։ Չորեքշաբթի օրերը—տղամարդիկ 50 կ., կանայք և ուսանողները 25-ական կօպ.։

Այն հիւրերը, որոնք ներկայացման տոմսակ ունեն վերցրած՝ կրկնը մտնելու համար վճարում են—տղամարդիկ 50 կ., կանայք և ուսանողները 25-ական կօպ.։

Ներկայացումների սկիզբը ժամը հինգ 8-ին երեկոյեան։

Սինէմատօգրաֆների սկիզբը ժամը 9-ին երեկոյեան։

(Ե.) առ. 994. 0—17

ФАБРИКИ А.ЭНФІАДЖІАНЦА
ПАПИРОСЫ
ИНТЕЛЛИГЕНТНЫЯ
ЦѢНА 25 шт. 15 к.
10 ш. 6 к. 100 ш. 60 к.
100—96

ПАПИРОСЫ
ЛЕВЪ 20 шт. 5 коп.
ФАБРИКИ А.ЭНФІАДЖІАНЦА
626.

ПАПИРОСЫ
ЭКСТРА
15 шт. 6 коп.
ФАБРИКИ А.ЭНФІАДЖІАНЦА
(Ա. հ. Ա.)

ԲԺՇԿ
Դր. ՄԱԿԱՐԵԱՆ
Ներքին եւ երեխայոց
հիւանդութիւններ
Ընդունում է հիւանդներին իր նոր բնակարանում՝ Դանօվսկայա փողոց, տուն Սէյլանովների, № 18, տէլէֆօն 615.
Առաւօտեան 12—1 ժամը
Երեկոյեան 5—6 ժամը
(Ե.հ.կ.) առ. 819. 100—60

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

4 և 5 փետրվարի

Պետերբուրգ.—Զերնօգօրական թագաւորը Պեսար գահաժառանգի և շքախմբի հետ մեկնեց արտասահման։ Հրաժեշտ տուին Մեծ Իշխաններ Դմիտրի Պավլովիչը, Դմիտրի Կոնստանտինովիչը, Դէօրգի և Սերգէյ Միխայլովիչները, Իշխաններ Իօան, Գաբրիել և Կոնստանտին Կոնստանտինովիչները, դուքս Լէխտենբուրգսկին, պրինց Պեսար Օլդենբուրգսկին. նաև մինիստրների խորհրդի նախագահը, արտաքին գործերի մինիստրը, Կայսերական շքախմբի անձինք, մայրաքաղաքի քաղաքացիական իշխանութիւնները։ Գնացքի մեկնելուց մի քանի րոպէ առաջ եկաւ Թագաւորը Գահաժառանգի և Մեծ Իշխաններ Նիկոլայ Նիկոլայեվիչի և Կիրիլ Վլադիմիրովիչի հետ։ Գնացքը մեկնեց ժ. 11 ու 50 ր.։ Երբ թագաւորի գնացքը հինգ րոպէով կանգ առաւ Ցարսկոէ-Սելօյում, վագոն բարեհաճեց մտնել Կայսրը և հրաժեշտ տուեց թագաւորին և գահաժառանգին։ Մի քանի րոպէից յետոյ Կայսրը դուրս եկաւ վագոնից և գլուխ տուեց թագաւորին։ Վերջինս խոնարհվեց Նորին Մեծութեանը։ Գնացքի հեռանալուց յետոյ Կայսրը հաճեց վերադառնալ Ցարսկոէ-Սելօյի պալատը։

—

Պետերբուրգ.—Բաղդ ունեցան Կայսրին ներկայանալ Պարիզի քաղաքային ինքնավարութեան անդամները Ռուսէլի գլխաւորութեամբ։ Կայսրը բարեհաճեց երկար խօսակցել ներկայացողների հետ։ Ֆրանսական հիւսիսառաջաւորվեցին Նորին Մեծութեանը մատուցել Պարիզ քաղաքի կողմից Սիբիրի քարերից պատրաստված մի գեղարուեստական բարձի ծածկոց, զարդարված Կայսրի անուան տառերով, թանգագին ակնեղէնով՝ ներսում Գահաժառանգի պատկերով։ Կայսերական ընդունելութիւնը հեռացողների վրա թողեց խոր տպաւորութիւն։

Ժամը 2-ին Անիչկեան Պալատում Մայր Թագուհի Մարիա Ֆէօդորովնային պատիւ ունեցան ներկայանալ Պարիզի հիւրերը։ Սկզբում Կայսրուհումօտ մտաւ Ռուսէլը, յետոյ միացածները։ Կայսրուհին բարեհաճեց խօսակցել ներկայացողների հետ, յետոյ մըտաւ իր սենեակը։

Քաղաքային վարչութիւնը «Կիւբա» ճաշարանում ֆրանսիացի հիւրերի պատիւն տուեց հրաժեշտի ճաշ։ Քաղաքային դումայի նախագահ Կազիցկինը և պատգամաւորութեան ներկայացուցիչ Ռուսէլը ճառեր փոխանակեցին։ Ռուսէլի կնոջը ուղարկվեց շնորհաւորական հեռագիր Պարիզ։

Ժամը 8-ին սրտագին հրաժեշտից յետոյ ֆրանսիացի հիւրերը մեկնեցին արտասահման։

—

Բերլին.—Ռէյխստագ։ Շարունակվում են վիճաբանութիւնները։ Սոց.-դեմոկրատ Լեդեբուր խիստ ճառով ընդդէմ Ռուսաստանի ասում է. «Այնպիսի բարբարոս պետութեան հետ, ինչպիսին Ռուսաստանն է, պայմանագրեր են կապում Պարսկաստանը կողոպտելու համար։ Ռուսաց կառավարութիւնը յարաբերութեան մէջ է նաև գերմանական կաբինետի հետ։ Իմ պարտականութիւնն եմ համարում բողոքել ժողովրդեան այդօրինակ քստմնելի ճորտութեան դէմ»։

Կիդերլէն-Վեխտէրը պատասխանեց. «Լեդեբուրը յարձակումներ գործեց մեր հարևան մեծ պետութեան կառավարութեան վրա, որի հետ մենք ապրում ենք խաղաղութեան մէջ ու բարեկամաբար։ Այդ տեսակ յարձակումներ այս դահլիճում դեռ ոչ ոք երբէք չէ լսել (բացագանչութիւններ աջից՝ «Լսեցէք»)։ Ես կարող եմ այդ յարձակումների առիթով սոսկ մեծ ցաւակցութիւն յայտնել և պէտք է հերքեմ նրանց ամենավճռական կերպով (ծափահարութիւն աջից)։ Ես համոզված եմ նոյնպէս, որ ներկայ եղողների մեծամասնութիւնը համակարծիք է իմ ցաւակցութեան» (ծափահարութիւն աջից. բացագանչութիւն սոցիալիստների կողմից՝ «ոչ»)։

—

Բերլին.—Սովորաբար, երբ գրաւոր կերպով զեկուցանվում էր կայսրին ռէյխստագի պրէզիդիումի ընտրութեան մասին, վերջինս լիակատար կազմով ունկնդրութիւն էր խնդրում, որպիսի ունկնդրութիւնը տրվում էր բացառապէս ամբողջ պրէզիդիումին, և ոչ նրա առանձին անդամներին։ Այժմ, Վոլֆի գործակալութեան տեղեկութեան համաձայն, ունկնդրութեան միջնորդութիւնը վերաբերվել է սոսկ նախագահին։ Միջնորդութեանը հետևել է այսպիսի պատասխան. «Կայսրը շնորհակալութիւն է յայտնում, ընդունել չէ կարող»։ Այդպիսի պատասխան տրվել է կանցլերի առաջարկութեամբ, որ անկարող եղաւ խորհուրդ տալ կայսրին համաձայնել չը խախտել սովորական կարգը։

—

Վիէննա.—Լուրերի համաձայն՝ Էրենտալի տեղ նշանակվելու է Բերտհոլդը։

Ցանուն Էրենտալի Կայսրը հրովարտակ տուեց, որի մէջ մեծ ցաւակցութիւն է յայտնում նրա տկարութեան առիթով, ընդգծում է իր անյողդողդ վստահութիւնը ոչ միայն իրան կոմսին, այլ և նրա զգուշաւոր քաղաքականութեանը։ Խորապէս շնորհակալ հաւատարիմ ծառայութեան համար, Կայսրը Էրենտալին պարգևում է գոհարներ՝ Ստեֆանի Մեծ Խաչի համար։

Առաւօտը Էրենտալը ամբողջ ժամանակ գիտակցութեան մէջ էր և հաղորդութիւն ընդունեց. ցերեկով հրաժեշտ տուեց ընտանիքին, կարգաց կայսերական հրովարտակը, որից ուրախութեամբ լցվեց։

Երեկոյեան ժամը 9¾-ին Էրենտալը վախճանվեց։

—

Հռոմ. — Զիոլետտին յանձնարարեց Վիէննայի դեսպանին հաղորդել աւստրիական կառավարութեան և Էրենտալի ընտանիքին խորին ցաւակցութիւն մինիստրի վաղաժամ մահվան համար։ Արտաքին գործերի մինիստրը դիմեց արտաքին գործերի մինիստրութեան բաժանմունքի կառավարիչ բարոն Միլլէրին մի հեռագրով, որի մէջ խնդրում է յայտնել Էրենտալի ընտանիքին իտալական թագաւորութեան և ժողովրդի ցաւակցութիւնը, և յոյս է յայտնում, թէ Իտալիայի և Աւստրիայի յարաբերութիւնները կամրանան։ Էրենտալի յիշատակը, որ այնքան մեծ մասնակցութիւն ունեցաւ այդ երանելի նպատակի իրականացմանը—միշտ կը յիշվի։

—

Ցետինիէ.—Պաշտօնական «Գլաս Զերնոգօրցա» լրագիրը ընդհանուր ազգային ուրախութիւն է յայտնում՝ ռուսաց Պալատի կողմից թագաւորին ցոյց տուած սրտագին ընդունելութեան առիթով։ Դրա մէջ լրագիրը ապացոյց է տեսնում, որ ռուսաց Կայսրները հնուց բարեկամ են եղել Զերնոգօրիային։ Մատնանշելով Ֆէլդմարշալի ասուիճան պարգևելու վրա, լրագիրն ասում է, որ այդ օրինակ պայմաններում հասկանալի է Կայսերական բաժակաճառի խօսքերի բովանդակ կարևորութիւնը՝ թէ Զերնոգօրիան անհրաժեշտութեան դէպքում իրան նեցուկ կը գտնէ յանձին Ցարի և Ռուսաստանի։

—

Լօնդօն.—Դրէյը զինուորական մինիստրի Բերլին այցելելու առիթով հաւատ յայտնեց, թէ կատարված է մի այնպիսի գործ, որ ունենայ բարենպաստ ազդեցութիւն. ճշմարտախօսութիւնը վանեց կասկածողութեան ու անվստահութեան քօղը։

—

Լօնդօն.—Դրէյը Մանչէստերում Անգլիայի արտաքին քաղաքականութեան մասին ճառելով ի միջի այլոց ասաց. «Մենք շատ լաւ յարաբերութիւնների ու բարեկամութեան մէջ էինք որոշ պետութիւնների հետ, աշխատում էինք այդ յարաբերութիւնները պահել, ընաւ չը վարելով ագրեսիվ քաղաքականութիւն որևէ մեծ պետութեան դէմ։ Մեր ծովային ոյժը էապէս կարևոր է սոսկ մեզ համար, իբրև մեր երկրի պաշտպանութիւն։ Անգլիացի ժողովուրդը, զբաղված առևտրով ու արդիւնաբերութեամբ, չունի աշխարհակալական, ագրեսիվ մտադրութիւններ, այլ շահագրգռված է խաղաղութիւն պահպանելով միայն։ Այդ տեսակէտից նրան պէտք է օգնէ մամուլը, որի պարտականութիւնն է՝ լինել արտայայտիչ խաղաղ քաղաքականութեան, ժողովուրդների գոյութեան այդ հիմունքին»։

—

Լօնդօն.—Իտալական մի ռազմանաւ երկու ժամ շարունակ Պերիմի մօտերը ռմբակոծեց թիւրքական նաւատորմը, որից յետոյ դիմեց դէպի հիւսիս։

—

Պորտ-Սայիդ. — Պորտ-Սայիդի մօտերը լողում են երեք իտալական ռազմանաւ։

Ցեղս եկաւ անգլիական «Կուտբերլէնդ» յածանաւը։

—

Կ. Պոլիս.—Բարենորոգումների մասնաժողովը մեկնեց Մակեդոնիա։

—

Զագրէբ.— Համալսարանական հրապարակի վրա տեղի ունեցաւ բոլոր կուսակցութիւնների ցոյց-ժողովը 5000 մարդու մասնակցութեամբ։ Արտասանվեցին ճառեր լրագիր գրաւելու, աբսոլիւտ բէժիմի և մաշարական կուսակցութիւն հիմնելու։ Ջոնտեռեռ սենատորը պատգամաւորները ներկայացրեց Խարբինում բնակվող չինացիների խնդրանքների և տեսերի վրայի հանրապետական դրօշակները։

Ռուսական իշխանութիւնները Լանդեանվէյից տեղեկութիւն ստացան, թէ ի նկատի ունենալով որ ագդարնակութեան մի մասը դիմադրում է նոր կարգին, զօրքեր են ուղարկված Հիւսիսային Մանջուրիա։ Լանդեանվէյը խնդրում է չէզոքութիւն պահպանել, հանրապետութեան անունից երաշխաւորում է օտարազգիների կեանքի ու գոյքի ապահովութեան համար և յայտնում է, որ բոլոր պայմանագրերը ու համաձայնութիւնները մնում են իրանց ուժի մէջ։ Նախատեսվում է կնքել փոխադրութիւններ հին կառավարութեան համար։ Այս տեղեկութիւնը ուղարկված է հաւանօրէն մինչև հասարակապետութիւն հաստատելու հրովարտակի հրատարակութիւնը։

—

Զիֆու.—Զը նայած նոր օրացոյց սահմանելուն, ագդարնակութիւնը տօնում է նոր-տարին։ Դրամատները և առևտրական հաստատութիւնները փակ են չորս օրով։ Շատ ֆիրմաներ վերջացրին իրանց գործերը թանգութեան ու արտակարգ հարկերի պատճառով։

—

Տոկիո.—Արտաքին գործերի մինիստրութիւնը ի տեղեկութիւն ընդունեց չինական դեսպանի յայտարարութիւնը, թէ ինքը ստանձնել է հասարակապետութեան ժամանակաւոր դիպլոմատիական ներկայացուցչի կոչումը, սակայն հրաժարվեց տալ պաշտօնական պատասխան։ Արտաքին գործերի մինիստրը պարլամենտում յայտնեց, որ Եապոնիան չինական հարցում գործելու է միայն միւս մեծ պետութիւնների հետ միասին։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

4 փետրվարի

Լօնդօն.—Դրէյը Մանչեստերում արտասանած ճառի մէջ պարսկական հարցի առիթով ասաց, թէ սխալ է այն ենթադրութիւնը, որ անգլո-ռուսական համաձայնութիւնը իբր Անգլիային պատասխանատու է դարձնում Պարսկաստանի անկախութեան ու անձեռնմխելիութեան համար. նոյնպէս համաձայնութեան ոգուն դէմ կը լինի այն կարծիքը, թէ համաձայնութեան նպատակն է ներհակել Ռուսաստանի մեծացող ազդեցութեանը Պարսկաստանի հիւսիսում։ Համաձայնութիւնը հետամուտ է բարի յարաբերութիւններ հաստատել երկու կառավարութիւնների միջև և ուժեղացնել երկու ժողովուրդների բարեկամական զգացմունքները։ Առանց համաձայնութեան Անգլիան երաշխաւորութիւն չէր ունենայ, որ Ռուսաստանը, օգտվելով Հիւսիսային Պարսկաստանում իր ունեցած ազդեցութիւնից, չի առաջնայ դէպի հնդկական սահմանը։

—

Թէհրան.—Դաղտնի կերպով մեկնեց Շուստերի նախկին օգնական ամերիկացի Կէրնսը, թողնելով իր ծառայակցին և այրի կայսրուհուն։ Լուրերի համաձայն՝ Իւանշիկայը քաղաքում չէր։ Նոր-տարվայ առիթով շատ արքունի հաստատութիւններում ծածանվում են հանրապետական դրօշակներ։ Նոյնպիսի դրօշակ պարզված է նաև Իւանշիկայի պալատի վրա։

—

Մուկդէն.— «Մանսիւ-Նիցի-Նիցին», ընդգծելով Զինաստանի ներկայ անցողական րոպէի լրջութիւնը, գրում է. «Եապոնիան, իբրև մերձ Զինաստանին, աւելի է շահագրգռված, որ նրա ամբողջութիւնը մնայ. իր առևտրի և հեռաւոր Արևելքի խաղաղութեան տեսակէտից պէտք է ամեն միջոցներով խոչընդոտ լինի Իւանշիկայի և Սունեատսէնի միջև որևէ տարաձայնութիւն ծագելու։ Նոր կառավարութեան դէմ արգելքներ ստեղծելու դէպքում Եապոնիան կանգ չը պէտք է առնէ նոյն իսկ ակտիվ միջամտութեան առաջ»։

—

Լսարքին.—Գրբինի նահանգապետը պատուիրագրեց տեղական չին իշխանութիւններին հանրապետական դրօշակ պարզել կառավարական հիմարանների վրա։ [illegible] նութիւնը իջեցրեց Խարբինում բնակվող չինացիների խանութների և տների վրայի հանրապետական դրօշակները։

Ռուսական իշխանութիւնները Լանդեանվէյից տեղեկութիւն ստացան, թէ ի նկատի ունենալով որ ագդարնակութեան մի մասը դիմադրում է նոր կարգին, զօրքեր են ուղարկված Հիւսիսային Մանջուրիա։ Լանդեանվէյը խնդրում է չէզոքութիւն պահպանել, հանրապետութեան անունից երաշխաւորում է օտարազգիների կեանքի ու գոյքի ապահովութեան համար և յայտնում է, որ բոլոր պայմանագրերը ու համաձայնութիւնները մնում են իրանց ուժի մէջ։ Նախատեսվում է կնքել փոխադրութիւններ հին կառավարութեան համար։ Այս տեղեկութիւնը ուղարկված է հաւանօրէն մինչև հասարակապետութիւն հաստատելու հրովարտակի հրատարակութիւնը։

—

Զիֆու.—Զը նայած նոր օրացոյց սահմանելուն, ագդարնակութիւնը տօնում է նոր-տարին։ Դրամատները և առևտրական հաստատութիւնները փակ են չորս օրով։ Շատ ֆիրմաներ վերջացրին իրանց գործերը թանգութեան ու արտակարգ հարկերի պատճառով։

—

Տոկիո.—Արտաքին գործերի մինիստրութիւնը ի տեղեկութիւն ընդունեց չինական դեսպանի յայտարարութիւնը, թէ ինքը ստանձնել է հասարակապետութեան ժամանակաւոր դիպլոմատիական ներկայացուցչի կոչումը, սակայն հրաժարվեց տալ պաշտօնական պատասխան։ Արտաքին գործերի մինիստրը պարլամենտում յայտնեց, որ Եապոնիան չինական հարցում գործելու է միայն միւս մեծ պետութիւնների հետ միասին։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

4 փետրվարի

Լօնդօն.—Դրէյը Մանչեստերում արտասանած ճառի մէջ պարսկական հարցի առիթով ասաց, թէ սխալ է այն ենթադրութիւնը, որ անգլո-ռուսական համաձայնութիւնը իբր Անգլիային պատասխանատու է դարձնում Պարսկաստանի անկախութեան ու անձեռնմխելիութեան համար. նոյնպէս համաձայնութեան ոգուն դէմ կը լինի այն կարծիքը, թէ համաձայնութեան նպատակն է ներհակել Ռուսաստանի մեծացող ազդեցութեանը Պարսկաստանի հիւսիսում։ Համաձայնութիւնը հետամուտ է բարի յարաբերութիւններ հաստատել երկու կառավարութիւնների միջև և ուժեղացնել երկու ժողովուրդների բարեկամական զգացմունքները։ Առանց համաձայնութեան Անգլիան երաշխաւորութիւն չէր ունենայ, որ Ռուսաստանը, օգտվելով Հիւսիսային Պարսկաստանում իր ունեցած ազդեցութիւնից, չի առաջնայ դէպի հնդկական սահմանը։

—

Թէհրան.—Դաղտնի կերպով մեկնեց Շուստերի նախկին օգնական ամերիկացի Կէրնսը, թողնելով իր ծառայակցին և այրի կայսրուհուն։ Լուրերի համաձայն՝ Իւանշիկայը քաղաքում չէր։ Նոր-տարվայ առիթով շատ արքունի հաստատութիւններում ծածանվում են հանրապետական դրօշակներ։ Նոյնպիսի դրօշակ պարզված է նաև Իւանշիկայի պալատի վրա։

—

Մուկդէն.— «Մանսիւ-Նիցի-Նիցին», ընդգծելով Զինաստանի ներկայ անցողական րոպէի լրջութիւնը, գրում է. «Եապոնիան, իբրև մերձ Զինաստանին, աւելի է շահագրգռված, որ նրա ամբողջութիւնը մնայ. իր առևտրի և հեռաւոր Արևելքի խաղաղութեան տեսակէտից պէտք է ամեն միջոցներով խոչընդոտ լինի Իւանշիկայի և Սունեատսէնի միջև որևէ տարաձայնութիւն ծագելու։ Նոր կառավարութեան դէմ արգելքներ ստեղծելու դէպքում Եապոնիան կանգ չը պէտք է առնէ նոյն իսկ ակտիվ միջամտութեան առաջ»։

—

Լսարքին.—Գրբինի նահանգապետը պատուիրագրեց տեղական չին իշխանութիւններին հանրապետական դրօշակ պարզել կառավարական հիմարանների վրա։ [illegible] նութիւնը իջեցրեց Խարբինում բնակվող չինացիների խանութների և տների վրայի հանրապետական դրօշակները։

Ռուսական իշխանութիւնները Լանդեանվէյից տեղեկութիւն ստացան, թէ ի նկատի ունենալով որ ագդարնակութեան մի մասը դիմադրում է նոր կարգին, զօրքեր են ուղարկված Հիւսիսային Մանջուրիա։ Լանդեանվէյը խնդրում է չէզոքութիւն պահպանել, հանրապետութեան անունից երաշխաւորում է օտարազգիների կեանքի ու գոյքի ապահովութեան համար և յայտնում է, որ բոլոր պայմանագրերը ու համաձայնութիւնները մնում են իրանց ուժի մէջ։ Նախատեսվում է կնքել փոխադրութիւններ հին կառավարութեան համար։ Այս տեղեկութիւնը ուղարկված է հաւանօրէն մինչև հասարակապետութիւն հաստատելու հրովարտակի հրատարակութիւնը։

—

Զիֆու.—Զը նայած նոր օրացոյց սահմանելուն, ագդարնակութիւնը տօնում է նոր-տարին։ Դրամատները և առևտրական հաստատութիւնները փակ են չորս օրով։ Շատ ֆիրմաներ վերջացրին իրանց գործերը թանգութեան ու արտակարգ հարկերի պատճառով։

—

Տոկիո.—Արտաքին գործերի մինիստրութիւնը ի տեղեկութիւն ընդունեց չինական դեսպանի յայտարարութիւնը, թէ ինքը ստանձնել է հասարակապետութեան ժամանակաւոր դիպլոմատիական ներկայացուցչի կոչումը, սակայն հրաժարվեց տալ պաշտօնական պատասխան։ Արտաքին գործերի մինիստրը պարլամենտում յայտնեց, որ Եապոնիան չինական հարցում գործելու է միայն միւս մեծ պետութիւնների հետ միասին։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

4 փետրվարի

Լօնդօն.—Դրէյը Մանչեստերում արտասանած ճառի մէջ պարսկական հարցի առիթով ասաց, թէ սխալ է այն ենթադրութիւնը, որ անգլո-ռուսական համաձայնութիւնը իբր Անգլիային պատասխանատու է դարձնում Պարսկաստանի անկախութեան ու անձեռնմխելիութեան համար. նոյնպէս համաձայնութեան ոգուն դէմ կը լինի այն կարծիքը, թէ համաձայնութեան նպատակն է ներհակել Ռուսաստանի մեծացող ազդեցութեանը Պարսկաստանի հիւսիսում։ Համաձայնութիւնը հետամուտ է բարի յարաբերութիւններ հաստատել երկու կառավարութիւնների միջև և ուժեղացնել երկու ժողովուրդների բարեկամական զգացմունքները։ Առանց համաձայնութեան Անգլիան երաշխաւորութիւն չէր ունենայ, որ Ռուսաստանը, օգտվելով Հիւսիսային Պարսկաստանում իր ունեցած ազդեցութիւնից, չի առաջնայ դէպի հնդկական սահմանը։

—

Թէհրան.—Դաղտնի կերպով մեկնեց Շուստերի նախկին օգնական ամերիկացի Կէրնսը, թողնելով իր ծառայա-

կիցներից մինին յանձնել գլխաւոր դանձատան հաշիւները Մօրնանին։ Պարսից կառավարութիւնը փորձեց ձերբակալել Կէրնսին Լնդէլիում. բայց նա արդէն դուրս էր եկել Պարսկաստանից։

—

Զուլֆա.—Թոյլ այստեղ բերին Թաւրիզում ռուսաց զօրքերի վրա գործված յարձակմանը մասնակցած չորս ֆէդայիների, որոնցից երեքը մօլլաներ են։

—

5 փետրվարի

Թէհրան.—Մահմէդ-Ալիի առաջիկայ մեկնելու առիթով Ռուսաստանի և Անգլիայի ներկայացուցիչները արտաքին գործերի մինիստրին յանձնեցին մի նոտա, որ շօշափում է զանազան սկզբունքային խնդիրներ։

Նախկին շահի կենսաթոշակի քանակի հարցը դեռ չէ որոշված։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Նորակազմ հոգաբարձութիւն

Խանքենդ, 29 յունվարի

Այսօր մեզ մօտ եկաւ թեմ. տեսչի պաշտօնակատար Ա. Առաքելեանը և տեղիս ծխ.-ուսումնարանի դահլիճում ժողովի հրաւիրեց ծխականներին։

Առաքելեանը շեշտեց հասարակութեան դէպի ուսումնարանը անտարբեր վարմունքի մասին և, այդ վերագրելով ուսումնարանի վարիչների անտակտ գործունէութեանը, առաջարկեց նոր հոգաբարձուներ ընտրել, որովհետև անցեալ տարվայ ընտրվածները հրաժարվում են իրանց պաշտօնից։ Ընտրվեցին՝ Ցակ. Ծատուրեան, Շ. Օսէփեան, Սող. Աթայեան և Աբեղեանով Սալանեան. անձափոխանորդներ՝ Ցակ. Գրիգորեան, Ցակ. Բալայեան և Ցար. Շահվերդեան։

Նոր հոգաբարձուները գործելու են երէցփոխ Իս. Արգարեանի հետ։

Ցանկալի է, որ սրանք իրանց համերաշխ գործակցութեամբ նուիրվէին ուսումնարանական գործին և բարեբէին ուսումնարանի ներկայ անմխիթար և ցաւալի վիճակը։

Մենք հաւատացած ենք, որ նորընտիր հոգաբարձուները կարգադրացնեն իրանց վրա դրված յոյսերը, եթէ միայն հասարակութիւնն ևս գիտակցէ կրթութեան անհրաժեշտութիւնը և չը խնայէ իր լումայով օգնութեան գալ և այդպիսով փրկէ ուսումնարանը կորստեան ճանապարհից։

Դիտող

—

Թեմ. տեսուչը Դվազխի գաւառում

Թեմ. տեսուչ Ց. Տէր-Միրաքեանը Դազախի գաւառը շրջելով՝ եկաւ մեր գիւղն ամսի 28-ին, քննեց աշակերտներին բոլոր առարկաներից, ժողովել տուեց գիւղի բանիմաց մարդկանց և ուսման մասին խօսեց նրանց հետ։

Թեմ. տեսչի մօտ եկան Դվեղի նորաբաց դպրոցի նորընտիր հոգաբարձուներն և խորհուրդներ հարցրին։

Սինոդի օրագրական վճռով Դվեղի ս. Սարգսի արդիւնքը յատկացվել է Դվեղի նորաբաց դպրոցին։ Այդ դուռ չէ գալիս բարանեցիներին, որոնք ամեն կերպ աշխատում են վճիռը բեկանել տալ յօգուտ բարանեցիների։

Թեմ. տեսուչը Սադախլուի վրայով վերադարձաւ Թիֆլիս։ Ֆօրստէր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՐԿԱՎՈՐ է ԼՈՒՐՋ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

«Կափուցէք զաչս յընթերցուածոց և խոցէք զականջս ի լսելոյ, մինչեւ զմտացդ անմոռացութիւն ոչ յիշեցէք»։

Եղիսէ

Յունվարի 28-ին Հրատակչական Ընկերութեան նախաձեռնութեամբ հրավիրված ժողովին մասնակցում էի և ես Յովհաննեան դպրոցի կողմից։

«Մշակի» ընթերցողները գիտեն, որ 1511—13 թվականներին հրատարակված գրքերի մասին ես կարծիք յայտնեցի, թէ դրանք հավանօրէն տպագրութիւն չեն Գուտենբերգի սիստեմով (շարժական տառերով), այլ կսիլոգրաֆիաներ են (փայտի վրա փորագրութիւն), որ դրանց հրատարակելու տարին կարող է ամենայն իրավամբ համարվել 1513 թվականը, գուցէ 1511-ը, բայց հաստիվ թէ 1912-ը։ («Մշակ» № № 18 և 19)։

Ժողովում առաջին խօսողներից մէկը ես եղայ։ Ես համառօտ կերպով բացատրեցի այն հիմունքները, որոնք ինձ ստիպում են այդ գրքերը համարել փորագրութիւն և ոչ տպագրութիւն։ Ապա ցոյց տվի այն մեծ տարբերութիւնը, որ կայ փորագրութեան և տպագրութեան մէջ՝ իբրև քաղաքակրթութիւնը առաջ մղող ազդակների։ Փորագրութիւնը իր անգործնականութեամբ, դժվարութեամբ, թանգութեամբ երբէք չէր կարող գրագիտութեան և կրթութեան մատուցանել այն նպատակը, որ տվեց տպագրութիւնը. թէպէտ փորագրութիւնը ԺԲ. դարից սկսած գոյութիւն է ունեցել Եվրոպայում և զարգացման գագաթնակէտին հասել ԺԵ.-ում, բայց ոչ ոք կսիլոգրաֆիայի յօրելեան չէ տօնել. այն-ինչ Գուտենբերգի գիւտի (շարժական տառերով տպագրութեան) յօբելեանը համամարդկային տօնի կերպարանք ստացավ, այնքան մեծ է այս երկու ձևի տպագրութեան տարբերութիւնը՝ հետևանքի նկատմամբ։ Ուստի քանի որ լուրջ կասածներ կան, թէ 1511—3-ի հրատարակութիւնները փորագրութիւններ են՝ լավ կը լինի մի մասնաժողով՝ այս հարցը մասնագիտօրէն քննելու, միևնոյն ժամանակ միջոց էլ կը տրվի Վիեննայի և Վենետիկի Մխիթարեան միաբանութեան հայրերին, որոնց մօտ գտնվում են գրքերի բուն օրինակները, այս տեսակէտից նորից քննել այդ գրքերը։ Եթէ կը ստուգվի, որ դրանք տպագրութիւններ են՝ մենք բավական ժամանակ կունենանք արժանավայել կերպով նրանց յօբելեանը տօնելու։ Իսկ առանց ստուգելու, չեղած բանի յօբելեանը տօնելով՝ մենք ազգովին ծիծաղելի դրութեան մէջ կընկնենք։ Այն մասին, թէ արդեօք 1912 թէ 1913 թվականը պէտք է համարվի այդ հրատարակութիւնների յօբելեանական տարին՝ ես խոստացայ երկրորդ անգամ խօսել՝ երբ հարցը գայ տարին որոշելու։

Ինձ պատասխանեցին 4—5 հոգի։ Հիմնական առարկութիւններ անողներն էին պ.պ. Լէօ և Արշ. Յարութիւնեան։ պ. Լէօն պաշտպանում էր այն միտքը, թէ 1512—3 հրատարակութիւնները իսկական տպագրութիւններ են գուտենբերգեան միջոցով, շարժական տառերով, որին իբրև գլխավոր ապացոյց բերում էր այն, որ այդ գրքերը տպագրված են երկու երեսի վրա էլ. այնինչ փորագրութիւնները, ինչպէս նա յայտարարեց, միայն մի երեսի վրա են տրվում։ Տառերի ծուռ և անկանոն լինելը այդ հրատարակութիւնների մէջ՝ նա բացատրում էր տպագրական արվեստի անկատարութեամբ այն հին ժամանակ, նաև տպագրողների յատուկ դիտավորութեամբ՝ իրանց հրատարակութիւնները ձեռագրի նմանեցնելու, որովհետև ժողովուրդը տպագրութեան վրա մեծապաշտ հայեացք ունէր, համարելով նրան սատանայի գիւտ։ Այս նպատակով էլ գրքի մէջ տպված է «գրեցաւ ի ձեռն Յակոբ մէղապարտ գրչի», որպէսզի ընթերցողներն այդ գիրքը ձեռագիր համարեն և չը խորշեն նրանից՝ իբրև տպագրութիւնից։

Պ. Արշ. Յարութիւնեանը բոլորովին այլ տեսակէտով առարկեց ինձ։ Նա գտնում էր, որ երկրորդական նշանակութիւն ունի այն միջոցը՝ որով գիրքը հրատարակվում է. տպագրութիւններ են այդ գրքերը, թէ փորագրութիւններ—այս չէ էականը։ Էականը այն գաղափարն է, որ ընդհանուր է այդ երկու տեսակի համար էլ, այսինքն բազմացնել որևէ գրվածքի օրինակները և հասարակութեան մատչելի դարձնել։ Այս պատճառով ներկայ 1912 թվին պէտք է տօնել այդ դաղափարի 400-ամեակը, թէկուզ տպագրութեան, թէկուզ փորագրութեան միջոցով իրականացած լինի այն։

Այս և ուրիշ առարկութիւններին պատասխանելու համար ես ձայն խնդրեցի նախագահից։

Լսվեցին հատ-հատ առարկութիւններ վիճաբանութիւնը շարունակելու դէմ, և ժողովը վճռեց վերջ տալ նրան։ Ես ստիպված լռեցի։

Այսպէս ուրեմն ժողովը թոյլ չը տվեց, որ հնարավորին չափ պարզվէին այս ամենակարևոր խնդիրները, թէ արդեօք ունինք մենք տպագրութեան 400-ամեայ յօբելեան, արդեօք կսիլոգրաֆիայով հրատարակութեան տարեդարձը կարելի է նոյնացնել և կոչել տպագրութեան տարեդարձ, և ո՞րն է այդ տարեդարձի իսկական տարին, 1912 թէ 1913։ Իսկ այս հարցերի լուծումից մեզ պէտք է ղեկեր յօբելեան տօնելու կամ չը տօնելու հարցը և տօնելու ժամանակը՝ եթէ ապացուցվէր, որ յօբելեան կայ։

Ժողովը իրավացի կերպով իրան ձեռնհաս չը համարեց այս հարցերը քննելու. բայց ես ժողովին այս չէի էլ առաջարկում. այլ բերելով փաստեր, որոնք կասածելի էին դարձնում այդ հրատարակութիւնների տպագրութիւն լինելը և 1512-ին սկսվելը՝ առաջարկում էի ձեռնհաս մարդկանց մասնաժողովի յանձնել այս հարցերի քննութիւնը և վճիռը։ Ժողովը ինքը ձեռնհաս չէր քննելու. ինչու տակտն չը կամեցավ ձեռնհաս մարդկանց յանձնել քննութիւնը իմ յարուցած հարցերի։ Ապա ինչ կերպով այդ ժողովը, որ իրան անձեռնհաս համարեց դրված հարցը քննելու՝ յանկարծ ձեռնհաս դարձավ նրան վճռելու համար։ Բայց ավելորդ է տրամաբանութիւն, լուրջ վերաբերմունք փնտռել այնտեղ, ուր տիրում էր կանխակիռը—«այո, 400-ամեայ յօբելեան է և պէտք է նրան տօնել հէնց հիմա» («Հօրիզօն» № 23)։

«Հօրիզօնը» (№ 21) իր պաշտպանութեան տակ է առնում ժողովի այս վերաբերմունքը։ Նա գտնում է, որ ես չը պիտի դիմէի «մի բոլորովին անպատրաստ և անկօմպետենտ ժողովի», այլ պիտի սպասէի լսելու, թէ ինչ կասեն իմ նկատած հանգամանքների մասին հին տպագրութիւնների պատմութեան ծանօթ անձերը, Վիեննայի և Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնները և այլն։ Ուշացի մարդիկ։ Ճշմարտութիւնը կոմպետենտ անձերից իմանալը, նրանց կարծիքով, միայն ինձ համար է պարտադիր, բայց ոչ բոլորի համար էլ։ Եթէ ես պարտավոր էի սպասել, ինչու ժողովն էլ պարտավոր չէր։ Եվ ինչ կը իմ առաջարկութիւնը—եթէ ոչ այն՝ ինչ որ «Հօրիզօնը» խրատում է ինձ անել, այսինքն՝ սպասել։ Ինչպէս ասացի, ես ինձ համար մեծ նեղութիւններ են լինում, որովհետև հեռաւորութեան և զարհվայը ճանապարհների պատճառով ջրկիրները չեն կարողանում ջուր հասցնել բոլորին, մանաւանդ ներքին թաղի բնակիչներին։

Այս բանի վրա ուշադրութիւն դարձրեց նախկին ձայնաւոր Սարգիս Տէր-Գրիգորեան։ Նա 1902 թ. արծարծեց այն միտքը, որ հարկաւոր չափով ջուր ունենալու համար կարևոր է քաղաքում շինել ջրմուղ, բերելով երկաթէ խողովակներով ջուր Կարդիախի կոչված աղբիւրներից, որոնք հեռու են քաղաքից 3 վերստով։ Նրան ծաղրեցին, շատերը հայհոյեցին, և հարցը մնաց առկախ։

1906 թ. ամառը Սղնախ եկաւ գերմանացի Հէնրիխ Եանցէն, որը անցկացրեց աղբիւր Մաշնաարի գիւղի համար։ Այս ժամանակ Ս. Տէր-Գրիգորեանը, ծանօթանալով նրա հետ, յայտնեց իր ծրագիրը ջրի մասին։ Խելօք գերմանացին ուշադրութեամբ լսեց և իսկոյն քաղաքային վարչութեանը յայտարարութիւն ներկայացրեց, որով ցանկութիւն յայտնեց շինել քաղաքում ջրմուղ, բերելով ջուր Կարդիախի աղբիւրներից։ Տէր-Գրիգորեանին միացաւ քաղաքային աւագ Վ. Ենիկոլոփեան, և գործը ընդունեց օրինական ընթացք։ Դուման ընդունեց Եանցէնի պայմանները և գործը առաջարկեց իշխանութեանը հաստատելու համար։ 3 դոյլ ջուրը պէտք է ծախվէր 1 կոպէկով։

Սրանից յետոյ հանդէս եկաւ մի ուրիշ ընկերութիւն, որ յանձն առաւ շինել ջրմուղ։ Քաղաքը պայման է կապել այդ ընկերութեան հետ։ Ընկերութեան ներկայացուցիչ ինժենէրը Սղնախում՝ և շուտով ձեռնարկելու է ջրմուղի շինութիւնն։ Ընկերութիւնը շահագործելու է ջուրը 25 տարով. 3 դոյլ ջուրը պէտք է ծախվի 1 կոպէկով. քաղաքի աղբիւրները մնալու են ազատ. քաղաքն էլ իրաւունք ունի որոշ չափով հրաժարվելու ջրից։

Այս հակասական գործ է Սղնախում, և մեր քաղաքացիները բարոյապէս պարտաւոր են երախտապարտ լինել Սարգիս Տէր-Գրիգորեանին, որ գործի նախաձեռնողը եղաւ։

Ն. Ն.

ԳՐԻԳՈՐԻՈՊՈԼԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԻՑ *)

Բ.

II «Անդրէասեան» դրամագլուխ՝

Գրիգորիոպոլի աղքատ հայերի համար

1863 թ-ի ապրիլի 9-ին Գրիգորիոպոլի քաղաքացի Աւէտիսիանոս Մինաս. Անդրէասեանցը կազմել է մի հոգ. կապ, որի XII կէտում ասված է. «Կամակում եմ, որ քաղաքիս հայերից անուանի և բարեկոյս երկու անձի իմ կարողութիւնից տրվի մի հազար ռուբլի՝ շահեցնելու համար, որի տոկոսիքով հոգացվեն Գրիգորիոպոլի չքաւոր և ամենաղքատ հայերի կարիքները՝ համաձայն իմ այն կարգադրութեան, որ արել եմ միշտ և ցմահ հսկել»։

Այդ փողերը երկար ժամանակ մնացին Աւէտիս. Անդրէասեանի ժառանգների մօտ, յետոյ անցան եկեղեցիների երէցփոխի հսկողութեանը՝ տրվելով մասնաւոր անձանց ձեռքը տարեկան 12%-ով։

1903 թ. օգոստոսին եկեղ. դրամագլուխների հետ միասին այդ փողերն ևս անցան պետական գանձարանի ձեռքը, իսկ 1906 թ-ի յունիսի 16-ին նորից անցան երէց-փոխի կառավարութեանը՝ եկեղեցական միս դրամագլուխների հետ միասին։

III «Ցրդատեան» դրամագլուխ՝

Գրիգորիոպոլի աղքատ հայերի համար

1868 թ-ի դեկտ. 20-ին Գրիգորիոպոլի քաղաքացի Կարապետ Մկրտչեան Ցրդատեանը կտակում է ս. Պետրոս-Պօղոս եկեղեցուն 925 ռուբ., որ մուրհակներով տուած է եղել զանազան անձանց։ Այժմ պարտաւորեցնում է հայ հասարակութիւնն, որ սա ընտրեալ և բարեյոյս անձանց միջոցով յետ ստանայ այդ գումարը պարտապաններից և շահեցնի մինչև 1000 ռուբլի դառնալը։ Այդ գումարը դարձեալ պէտք է շահեցնել, 100 ռ. տարեկան 12%-ով տալով և ստացված արդիւնքը բաժանելով երկու հաւասար մասի, որոնցից մէկը յատկացվելու է եկեղեցու բարեգործութեան համար, իսկ միւսը Ցննդեան և Զատկի տօներից առաջ բաժանվելու է (առանց մնացորդի) Գրիգորիոպոլի աղքատ հայերին։

Ըստ երևոյթին բարերարի ցանկութիւնը սկզբում նոյնութեամբ կատարվում էր, բայց յետոյ այդ դրամագլուխն ևս արժանացաւ այն բաղդին, ինչ որ Անդրէասեան դրամագլուխը, այն է՝ խառնվեց եկեղեցական գումարների հետ, 1903 թ-ին անցաւ պետական գանձարանի ձեռքը, իսկ 1906 թ-ին վերստին անցաւ հայոց եկեղեցիների երէցփոխի տնօրինութեանը։

Խաչ. Տէր-Ենոքեան

ԼԱՒ ՄԱՐԴՈՒ ՑՐՇԱՏԱԿԻՆ

Ժողովուրդը «լաւ մարդ» անպաճոյճ խօսքերով է ընորոշում հասարակութեան այն անդամին, որը կեանք է մտնում իր շրջապատին օգտակար լինելու հոգով։

Մի այդպիսի մարդ նորերս վախճանվեց Ախալքալաք քաղաքում։ Խօսքս տեղական ծխական դպրոցների հոգաբարձութեան նախագահ Յովհաննէս Յարութիւնեանի մասին է, որ կնքեց իր մահկանացուն մօտ 65 տարեկան հասակում յունվարի 14-ին։ Հանգուցեալը չունէր ոչ մեծ ընդունակութիւններ, ոչ էլ մեծ ուսում։ Զը նայած դրան՝ Յ. Յարութիւնեանը մեռաւ՝ արժանացած այն ամենամեծ պատուին, որ ժողովուրդը արտայայտում է «լաւ մարդ» ջուխտ խօսքով։ Լաւ հոգի—ահա այն ոյժը, որը Յ. Յարութիւնեանին կամ, ինչպէս նրան սովորաբար կոչում էին, «Իվան աղային» ժողովրդի աչքում սիրելի դարձրեց։ Յարութիւնեանը երբէք յաւակնութիւն չէ ունեցել իրան հասարակական գործիչ համարելու։ Աւելին՝ նրա համեստութիւնը այնքան մեծ, այնքան բնական էր, որ թոյլ չէր տալիս նրան կարծել անգամ [illegible] հասարակական նշանակութիւն ունեցող գործ է կատարում։

«Իվան աղան» հասարակական պաշտօնները կատարում էր այնպէս, կարծես այդ շատ բնական լինէր... Ազնուութիւն, բարեխղճութիւն, համեստութիւն, բարութիւն և այդպիսի յատկութիւններ—ահա ինչով էր Յարութիւնեանը գրաւում ժողովրդի սիրտը, առանց գրաւելու նպատակ ունենալու։ Ոչ թէ Յարութիւնեանն էր անուան ետևից վազում, այլ անունը նրա։ Հանգուցեալին չեն մոռանայ մանաւանդ Ախալքալաք գաւառի գիւղացիները, որոնք գալիս էին նրա մօտ զանազան թղթեր կազմելու, խորհուրդներ իմանալու և այլ խնդիրներով։ Պէտք էր տեսնել, թէ նա ինչպիսի համբերութեամբ և սիրով էր կատարում իրան դիմող խեղճ մարդկանց ցանկութիւնները։ Ցարութիւնեանը իրան մօտից ճանաչող մարդկանց զարմացնում էր և իր ընթերցասիրութեամբ. չը նայած իր հասակին ու զբաղված լինելուն՝ նա չէր կարող օրվայ ընթացքում որոշ ժամանակ չը նուիրել «կարդալուն»։ Այս տեսակէտից ընորոշ էր մի փաստ. 62 տարեկան հասակում նա պատրաստվեց և տեղական քաղաքային 4-դասեան դպրոցի աւարտման քննութիւն տուեց...

Հանգուցեալը այնքան չապրեց, որ տեսնէր իր սիրած գործի՝ տեղական ծխական դպրոցների կառուցվող սքանչելի շէնքի աւարտումը։ Այս կողմից նա իր «մուրազին» չը հասաւ... Պ. Աբէլեան

Մօսկվա, 26 յունվարի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Երկրագործութեան զեպարտամենտի փոխ-վերատեսուչ Սօկօլնինի նախագահութեամբ և մասնակցութեամբ Կովկասեան, Հայ և Վրաց Գիւղատնտեսական Ընկերութիւնների ներկայացուցիչների՝ այս օրերս տեղի կունենայ մի խորհրդակցութիւն գիւղատնտեսական արդիւնաբերութեան զարգացման շուրջը։

✦ Փետրվարի 2-ին Թիֆլիսի արական 2-րդ գիմնազիայում տեղի ունեցաւ դրական երեկոյթ Ա. Պուշկինի մահվան 75-ամեակի առիթով։ Երեկոյթին ի միջի այլ հիւրերի ներկայ էր ուսումնարանական շրջանի հոգաբարձու Ն. Բուդոլֆը։

✦ Փետրվարի 12-ին տեղի կունենայ Կովկասեան ինվալիդների ընկերութեան օգտին մի երեկոյթ, որի կազմակերպողն է կոմսուհի Ե. Ա. Վորոնցով-Դաշկովան։

✦ Կովկասեան աշխարհագրական ընկերութեան հետեւեալ նիստը կը գումարվի փետրվարի 15-ին, երբ Իւ. Վորոնով կը զեկուցէ Ղարաբաղի հարթավայրերի մասին։

✦ Ա. Թամամշեանի կազմակերպած դասական ձեւով կովերին կերակրելու գործը ընդարձակված է նպաստաւոր արդիւնքներ տուած լինելուն պատճառով։ Կերակրարանը գտնվում է Օրթաճալայում, Տուլայեվի տանը։

✦ «Մշակի» № № 10-ի և 25-ի մէջ արձանագրված չունեցող աշակերտի ուսման վճարի (50 ռ.) հաշվին ստացանք տ. Սօֆիա Գէորգեանից 10 ռուբլի՝ նորերս հանգուցեալ տ. Լուսիկ Եարդուլեանի դագաղի վրա պտակ դնելու փոխարէն։ Ուրեմն յիշեալ աշակերտի օգտին ստացել ենք մինչև այժմ 15 ռուբլի։

✦ Իրաւաբանական ընկերութեան հերթական նիստը տեղի կունենայ փետրվարի 10-ին, երբ կը կարդացվեն մի քանի զեկուցումներ։

✦ Փետրվարի 1-ին Թիֆլիսում վախճանվեց ուղղափառ սեմինարիայի հնագոյն դասատու Ալ. Խմելեվսկի, որի թաղումը տեղի ունեցաւ փետրվարի 5-ին։

✦ Առաջիկայ ապրիլ ամսի 10—15-ը Պետերբուրգում տեղի կունենայ մանր և միջին առևտրի գործողների համառուսական համագումարը, որի նպատակն է այդ կարգի առևտրի կանոնաւորման և բարւոքման մասին խորհրդակցել։

✦ Այսօրվանից Վլադիկավկազում կը սկսվեն պարբերական դասախօսութիւններ գիւղատնտեսական հարցերի մասին։ Այդ դասախօսութիւնները կազմակերպում է ժողովրդական ընթերցանութիւնների ընկերութիւնը։

✦ Կովկասեան ուղիների շրջանային վարչութիւնը ընտրել մասնագէտ անձերից մասնաժողով, որը քննէ յարուցված հարցերը և ըստ այնմ վճռվի յօբելեան տօնելու կամ չը տօնելու հարցը և տօնելու ժամանակը։

Ես պնդում եմ դարձեալ, թէ անհրաժեշտ է կազմել ձեռնհաս անձերից մասնաժողով յարուցված հարցերը քննելու համար. հակառակ դէպքում մենք փոխանակ «համազգային յօբելեանի» կարող ենք ունենալ համազգային հիպնոզ, համազգային ինքնախաբէութիւն և համազգային խայտառակութիւն։

Մասնաժողովը կարող է մի ամվայ ընթացքում իր վրա դրվելիք պարտականութիւնները կատարել, ուրեմն մարտի սկիզբներից այն կողմը դեռ շատ ու շատ ժամանակ կը մնայ, եթէ տօնելու է՝ տօնել, թէկուզ մայիսին, թէկուզ հոկտեմբերին, թէկուզ 1913-ին, որ յամենայն դէպս աւելի հիմնավոր և անկասկածելի է։

Մասնաժողովը անհրաժեշտ է, որովհետև իմ առաջին յօդվածից յետոյ այս հարցի մասին («Մշակ» №№ 18, 19), չը նայելով պ. Լէօի բերանացի և գրավոր առարկութիւններին, ես ավելի համոզված եմ, որ ամենայն հավանականութեամբ 1512-ին տպագրութիւն չէ եղել, որ 1511—13-ի հինգ գրքերը տպագրութիւններ չեն այս բառի սովորական իմաստով, շարժական տառերի շարուածքով, այլ փորագրութիւններ են*)։

---

*) Տես «Մշակ» № 25.

*) պ. Լէօն այժմ («Հօրիզօն» № 24) ուրիշ երդ է երգում։ Գուտենբերգի գիւտ մէջ շարժական տառերին նա երկրորդական նշանակութիւն է տալիս, այլ «տպարանի հիմնական սկզբունքը, էութիւնը» համարում է նրա հնարած «տպագրական մեքենան, մամուլը»։ Ապա նա շարունակում է. «Այդ մամուլի տակից դուրս եկող ամեն մի բան, լինէր դա շարժական տառ թէ անշարժ տախտակ, տպագրութիւն էր։ Ուրեմն եզրակացրէք, ընթերցող, որ եթէ Պարզատումարը և միւս 4 գիրքը անշարժ տախտակից, այսինքն կսիլոգրա-

չութեան գլխաւոր Ս. Հօֆմանը պաշտօնական գործերով Պետերբուրգ մեկնեց։

✦ Զուզդիդում իշխան Մինգրելսկիի տունը ատրճանակի երեք հարուածներով ըսպանած է իշխանի կալուածների կրտսեր կառավարիչ Գախու Կանկիս։ Զարագործը թաղնվել է։

✦ Բագում «Մեծ Իշխան Կոնստանտին» կոչված շոգենաւի վրա երեան են հանված 825 ռազմական փամփուշտներ։

✦ «Баку» լրագրի խմբագիր Վերմիշեանի գործը, որով նա դատաստանական պատասխանատուութեան է ենթարկվում Պարսկաստանից գրված մի թղթակցութիւն զետեղելուն համար, կը քննվի Թիֆլիսում մարտ ամսին։

✦ Վրիպակ.—«Մշակի» № 24-ում լոյս տեսած Ա. Մ. Եղեկեանի յօդուածում («Յունվարի 28-ի ժողովը Թիֆլիսում») սպրդել է մի երկու սխալ։ Թերթի երրորդ երեսի երկրորդ սիւնակի վրա 5-րդ պարբերութեան 2-դ տողում լոյս է տեսել՝ «...և ինչու ինչ...», պիտի լինի՝ «...և ինչ ու ինչ...»։ Նոյն սիւնակի այն պարբերութեան մէջ, որ սկսվում է՝ «Այդ սահմանի մէջ է, պատուական պարոն» բառերով, սպրդել է հետեւեալ սխալը. նոյն պարբերութեան 4-դ տողի՝ վրա լոյս է տեսել՝ «...ժողովել զարին բարի յամանս», պէտք է լինի՝ «ժողովել զարի բարին յամանս...»։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԹԵՐԹԵՐԻՑ

✦ *Բանասէրների ժողովը Պետերբուրգում.*—Դեկտեմբերի 30-ին բանասիրական ժողովը կայացրեց հետեւեալ վճիռները. 1) 1901 թ. յոյն լեզուն զիմնազիաներից վտարելը ոչ միայն վերին ատիճանի պակասեցրեց աշակերտների գիտեցածը, այլև ամենևին չաւելացրեց միւս առարկաների առաջադիմութիւնը։ 2) Ժողովը գտնում է, որ Ռուսաստանի համար յոյն լեզուն ունի կուլտուրա-պատմական մեծ նշանակութիւն, քան լատին լեզուն, և որ, այս պատճառով, ցանկալի է հիմնել հելլէնական զիմնազիաներ՝ յունարէնի գլխաւորութեամբ։ 3) Հարցաքննութիւններին աշակերտութիւնը պատասխանելու է այն պահանջներին, որոնք պահանջում են 1890 թ. ծրագիրները։ 4) Ժողովը, կասիք կրթութեան համար, անհրաժեշտ տարբ է համարում՝ ծանօթացնել աշակերտութեանը հին աշխարհի հոգևոր ու նիւթական կուլտուրային։ 5) Թանգարաններ այցելելը, էքսկուրսիաները, ներկայացումներն ու համերգները՝ ժողովը համարում է այնպիսի միջոցներ, որոնք կարող են նպաստել հին լեզուների կենդանանալուն և առաջադիմելուն։

Ժողովի նախագահ Լատիշևը աւելացնում է՝ «Այս վերջացող տարին ոչինչ մըխիթարական բան չը տուեց մեզ՝ կասիկներիս, բացի այս ժողովից»։

✦ *Կոշկակար, կոշիկներ ճանաչիր.*—Բօստոն (Ռուսի վրա) քաղաքում նորերս նշանակված ոստիկանապետ կապիտան Իվանովը պարտաւորեցրել է բոլոր տպարանատէրերին՝ տպված գլուխքները լոյս ընծայել անպատճառ твердый знакով, քանի որ առանց այդ նշանի (ъ) գրելը «անզրագիտական» է։

✦ *Աղբատ համալսարան.*—Նովօրոսսիյսկի եպիսկոպոս Լեվաշովը վճռել է դիմել լուսաւորութեան մինիստրին, նկարագրելով մի ընդարձակ գրութեամբ համալսարանի թշուառ վիճակը։ Եպիսկոպոսը խնդրում է նպաստ, առանց որի «սպառնում է համալսարանին կատարեալ քայքայում»։ Համալսարանի բացը 90,000 ռուբլի է։ Եպիսկոպոսը մատնանշում է փայտի թանգանալը, զգալիօրէն ուսանողութեան թիւի նուազումը (2000 մարդ) և վերջապէս՝ մի շարք նոր շէնքերի պահպանութիւնը։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Արքունական Թատրոնում

Շաբաթ, փետրվարի 4-ին, տեղի ունեցաւ ներկայ սեզոնի օպերային խմբի անտարբէրնեոր Ի. Պ. Պալիէվի բենեֆիսը։

Թատրոնը ծայրից-ծայր լիքը հասարակութիւնը շտապել էր վաղօրօք տոմսակ ձեռք բերել և իր ներկայութեամբ պատուել Ի. Պ. Պալիէվին, որի անխոնջ ջանքերի շնորհիւ այս սեզոնին Թիֆլիսի երաժշտասէր հասարակութիւնը ունեցաւ տաղանդաւոր և աչքի ընկնող ոյժերից կազմակերպված օպերային խումբ և վայելեց մեծ բաւականութիւն։ Մեր ասածին իբրև գրական կարող է ծառայել այն՝ որ օպերային ներկայացումներին համարեա ամեն երեկոյ թատրոնը լի է եղել երաժշտասէր ընտիր հասարակութեամբ։

Բենեֆիցիանտն այդ երեկոյ դրել էր իր բենեֆիսին Ռ. Վագների «Ծանգէյդէր» երաժշտական դրաման, որ լի է մեծ մասամբ երաժշտական մեղեդիներով և որը դրել է Վագնէր 1845 թ.։

Դրամայի հանդէպ բովանդակութիւնը հետեւեալն է.

Տիւրինգէնի լանդգրաֆ Գերմանի (Մոզժուխին) պալատական ասպետ՝ միևնոյն ժամանակ և՝ բանաստեղծ՝ Տանգէյզերը (Լազարեվ) երկրի վրա չը գտնելով կանացի կատարեալ գեղեցկութիւն և իսկական ջերմ սէր՝ հեռանում է երկրից և գնում Վէնէրայի (Բալիօնակայա) մօտ, ուր կարողանում է գտնել և վայելել իր փնտրածը։ Սակայն երկար չը կարողանալով մնալ այդ ցնորական աշխարհում, նորից վերադառնում է երկիր՝ լանդգրաֆի պալատը, ուր անկեղծ սիրով ողջոյնված սպասում է նրան լանդգրաֆի եղբօր-աղջիկը՝ պրինցեսի Ելիզավէտան (Ալէշկո)։ Շատ կարճառև է լինում Տանգէյզերի և Ելիզավէտայի բուռն սէրը։ Պալատականները, նոյնպէս և Ելիզավէտան, իմանալով որ Տանգէյզերը եղել է Վէնէրայի տիրապետութեան մէջ ու ճաշակել է նրա սէրը՝ համարում են նրան չար ոգով բռնված ու ծանր յանցաւոր, և որոշում են նրան գնալ Հռոմ իր մեղքերի համար թողութիւն խնդրելու։ Տանգէյզերն ասնելով ճանապարհորդական ցուպը՝ դիմում է Հռոմ, իսկ Ելիզավէտան մեկուսանալով երկրային կեանքից՝ նուիրում է իրան Աստուծուն և սկսում է աղօթել Տանգէյզերի հոգու փրկութեան համար։ Տանգէյզերը թողութիւն չը ստանալով Հռոմում՝ սրտաբեկ վերադառնում է այնտեղից և ճանապարհին շարունակ օգնութեան կանչում Վէնէրային։ Նորից երևան է գալիս Վերջինս և հրաւիրում նրան իր՝ վշտերից և չարիքներից զերծ օթեանը։ Սակայն այդ իսկ բօսէին լսվում է ազերթի մեղմաղձոտ երգասացութիւն։ Ելիզավէտայի մահացած մարմինը տանում են թաղելու։ Տանգէյզերը լսելով պալատական Վոլֆրամից (Սօլօլսկի) մեռելի ով լինելը՝ շտապեցնում է գագաղի վրա և ինքն էլ շունչը փչում։

Ցիշելով օպերան սկսվում է երկարատև ուվերտիւրայով, որի ժամանակ բենեֆիցիանտ Պալիէվ ցոյց տուեց իր հմուտ դիրիժոր լինելը և արժանացաւ բուռն ծափահարութիւնների։

Երկրորդ արարուածի ժամանակ Ի. Պալիէվ ծափահարութիւնների տարափի տակ հրաւիրվեց բեմ՝ շրջապատված օպերային ամբողջ խմբի կողմից՝ և ստացաւ թանգարժէք ընծաներ, պսակներ և ծաղկեփունջեր։

Թէ օպերան և թէ դերակատարներն իրանց խաղով թողեցին լաւ տպաւորութիւն։

Կիրակի, փետրվարի 5-ի երեկոյեան կայացաւ օպերային խմբի հրաժեշտի ներկայացումը և դրանով փակվեց այս 1911/1912 թ. սեզոնը։

X.

ԿՈՎԿ. ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ. ՈՐԲՈՒՀԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Փետրվարի 5-ին, երեկոյեան, Բարեգործ. Ընկերութեան «Ղարաջևան» հանդիսադահլիճում տեղի ունեցաւ նոյն հիմնարկութեան որբուհիների երկրորդ ներկայացումը (առաջինը փետրվ. 3-ին)։

Խաղացին որբուհիներից մէկի՝ Վ. Նալբանդեանի (Ցովհ. դպրոցի VI դաս. աշակ.) հեղինակած «Սիրոյ բանալի» դրաման՝ բաղկացած 2 արարուածից և 4 պատկերներից։ Վերջին երկու պատկերները ներկայացնում են հիւրերի աշխարհ՝ անտառը, և բեմի վրա հանդիսականների առաջ պատկերանում է մի սիրուն տեսարան, որտեղ տիրում է երգն ու խնդութիւնը։ Այդ մասը հեղինակը գրել է ոտանաւորով, և վերածել է նրան երաժշտութեան՝ որբանոցի սանուհի Ս. Մելիքեանը (Ցովն. դպրոցի VI դաս. աշակերտուհի)։

Այս վերջին մասն էլ իր տեսարաններով ու երաժշտութեամբ կազմում էր ներկայացման ամենաուշագրաւ մասը։

Դրամայի բովանդակութիւնը հետեւեալն է.

Ընտանիքի մայրը (որը Մ. Օդաբաշեան) իր զուարճութիւնների հետևից ընկած, աչքաթող է անում տունը, զաւակներին, ծանրաբեռնում հաշւապահ ամուսնուն՝ Ցովհաննէսին (որը Վ. Դաւլիշեանեան) և վերջն էլ դաւաճանում նրան։ Շնորհիւ իր ընկերոջ՝ Ցովհաննէսը ստանում է կնոջ դաւաճանութեան կենդանի ապացոյց նամակը, և թողնելով իր սիրելի՝ հրեշտակային աղջկանը, մօրը քաշած տղային, փախչում է անից։

Վերջապէս նա ընկնում է մի անտառ և հիւրերների շրջանում՝ բնութեան ազատ ծոցի մէջ գտնում է սիրոյ բանալին։

Ցովհաննէսի աղջիկ Սանդուխտը (օր. Ս. Սերովբեան) իր ջուխակն առած՝ նոյնպէս թողնում է տունը և գնում հօրը որոնելու։

Անտառի մէջ հիւրերների շրջանումն էլ նրանք հանդիպում և ճանաչում են իրար։ Հայրը վերադառնում է տուն աղջկայ հետ միասին։

Ներկայացումը անցաւ սահուն, աշխոյժ, մանաւանդ աշող էր երաժշտական մասը՝ հիւրերների երգն ու պարը։

Եւ դահլիճը խլացուցիչ միահամուռ ծափերով, ծաղկեփունջերով վարձատրեց ներկայացման առանցքը կազմող երկու որբ սանուհիներին՝ թէ հեղինակող Վ. Նալբանդեանին և թէ երաժշտութեան վերածող Ս. Մելիքեանին։

Զարմանալի ուրախալի և մխիթարական է այդ երեկոյթը որբանոցի կեանքում։

Եւ միանգամայն գովասանքի արժանի այն հոգատար նախաձեռնութիւնը, որ հրապարակ է մղել որբերի մէջ նշմարվող ընդունակութիւնները։

Երկու պլիւս է շահում դրանով Կ. Հ. Բ. Ընկ.-ը. նախ՝ որ գեղեցիկ գիտելիքներ և զուարճութիւն է մատչում որբերի մէջ, և երկրորդ՝ որ հասարակութեան ուշադրութեանն է ներկայացնում այն հոյակապ դաստիարակութիւնը, որ կարօտ է խրախոյսի, կարօտ է աջակցութեան։

Դահլիճում ասեղ գցելու տեղ չը կար. մեծ մասամբ աշ.-աշակերտուհիներ էին, կային և բաւականին թւով մեծեր, որոնց հիացմունքին չափ ու սահման չը կար։

Ցանկալի է, որ այդ առաջին օրինակն իր շարունակութիւնն ունենայ։

Լ. Դանիէլեան

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Կ. Հ. Բարեգործական Ընկերութեան դահլիճում փետրվարի 3-ին տեղի ունեցաւ մի խիստ հետաքրքրական և բացառիկ ներկայացում։

Խուդադեան որբանոցի սանուհիները խաղացին «Սիրոյ բանալի» անունով մի թատերական պիէս 2 գործողութեամբ և 4 պատկերով, երաժշտական բաժինով և պարերով։

Այդ մանկական երեկոյթի աղը այն էր, որ թատերական գրուածքի և նրա երաժշտական մասի հեղինակները նոյն որբանոցի սանուհիներն էին՝ Վարսենիկ Նալբանդեան և Սիրանոյշ Մէլիքեան՝ Ցովհաննէսեան դպրոցի VI դասարանի աշակերտուհիներ, որոնցից առաջինը արդէն մի տարի է, որ բանաստեղծական բնածին շնորհով ոտանաւորներ է գրում (մի ոտանաւորը «Այն ով է լալիս, այն ով է ողբում» տպված է «Ազբիւր» պատկերազարդ ամսագրի ներկայ տարվայ յունվար ամսի տեսքում), իսկ երկրորդը՝ պարապելով Թիֆլիսի կայսերական երաժշտական դպրոցում, ձեռնհասութեամբ և արդեամբ տիկին Սպենդիարեանի, աչքի ընկնող ձիրք և ընդունակութիւն է ցոյց տալիս երաժշտութեան մէջ։ Այդ սանուհու յատուկ պիէսի համար յատկացված սոլօ և խմբական երաժշտական կտորները ջերմ հաւանութիւն գտան երաժշտութեան ուսուցչուհի Մարիա Գաբայէվայի կողմից, որը այդ երեկոյթին ներկայ էր։

Պիէսի երաժշտական մասը մանդոլինաների և դաշնամուրի վրա սիրով յանձն առան նուագել Ցովհաննեան օր. դպրոցի բարձր դասարանի աշակերտուհիները՝ զեկավարութեամբ նոյն դպրոցի ուսուցիչ Դէմիրճեանի։

Դահլիճը լի էր մանկահասակ և հասակաւոր հանդիսականներով, որոնք ջերմ ծափահարութիւններով խրախուսում էին պիէսի դերակատարներին և հեղինակներին։

Երկրորդ գործողութիւնից յետոյ նոյն Վ. Նալբանդեանը կարդաց պատշաճաւոր շեշտով իր հեղինակած ոտանաւորը։

Առանձին փայլ տուեցին ներկայացմանը վերջին գործողութեան մէջ մասնակցող անտառային փերիները իրանց գեղեցիկ և ընտիր ճաշակով ձեւած շորերով, որանց վրա աշխատել էր գեղարուեստագէտ Եղիս. Պատկանեանը։

Ներկայացման յաջողացրին հայկական և եւրոպական պարերը, որոնք տեսնվեցին մինչև կէս գիշեր ուրախութեան և կենդանութեան մէջ։

Այդ երեկոյթը թողեց բոլոր հանդիսականների վրա քաղցր տպաւորութիւն։

Խօսելով այդ մանկական հանդէսի մասին, մենք չենք կարող չը յիշել որբանոցի կառավարչուհի օր. Շուշանիկ Քանդարեանի անունը, որը այդ երեկոյթի զեկավարն ու կարգադրիչն էր։ Եկող տարի կը լրանայ ուղիղ 10 տարի, որ այդ յարգելի գործիչը Խուդադեան որբանոցի ծանը և պատասխանատու պաշտօնն է կատարում։ Նայելով նրա մայրական խնամքով մեծացած ու կրթած սանուհիների վրա, մենք հանդիստ խղճով կարող ենք վկայել, որ Շուշ. Քանդարեանը չէ խնայել իր բոլոր հոգեկան ոյժերն ու օրինակելի եռանդը բարեյիշատակ Խուդադեանի որբուհիներին կրթելու, զարգացնելու և ազնուացնելու համար։ Արժանի է յիշատակութեան, որ նրա դաստիարակած սաների մասին ջերմ գովասանքով խօսեցին ամբիոնից Բարեգործ. Ընկերութեան 30-ամեայ յոբելեանի օրը նաև Ցովհաննեան օր. դպրոցի տեսուչ Ստ. Մալխասեանը և ուսուցիչներից մէկը, որոնց արտայայտած կարծիքը հանդիսաւոր ժողովի առաջ մի հեղինակաւոր վկայագիր է որբանոցի կառավարչուհու բարեխիղճ և օրինակելի ծառայութեան։

Հանդիսական

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ասատրեան, 16 յունվարի

Թոյլ տուէք, խնդրում եմ, «Մշակի» № 281-ում տպագրված Գ. ք. Մկրտումեանի ստորագրութեամբ Ասատրեանից գրված նամակի մէջ ուղղել մի քանի փաստացի անճշտութիւններ, որոնք այդ խնդրում ունեն ահագին նշանակութիւն։

1) Մա. ժողովը եղել է ոչ թէ դեկտեմբ. 3-ին, ինչպէս գրում է յօդուածագիր քահանան, այլ 4-ին, և այդ 1 օրվայ տարբերութիւնն ունի ոչ պակաս նշանակութիւն, ի նկատի ունենալով Ասատրեանից մինչև Էջմիածին եղող հեռաւոր տարածութիւնը և մնացած օրերը։

2) Ես Սաթունեանից հեռագիրը ստացել եմ ոչ թէ նոյեմբերի 20-ին, ինչպէս գրում է հայր Մկրտումեանը, այլ 24-ին, որին հէնց միւս օրը, այսինքն 25-ին, պատասխանել եմ։

3) Սաթունեանի հեռագրի բովանդակութիւնը յօդուածագիրը բերում է բառացի (այն էլ չակերտների մէջ) այսպէս. «Պատրաստվիր ճանապարհ ընկնել Էջմիածին, գուցէ ես չը կարողանամ գնալ՝ Պետերբուրգ կանչված լինելուս պատճառով Դաշնակցութեան գործով». մինչդեռ հեռագրի իսկական բառացի բովանդակութիւնն այս է. «Առաջարկում եմ միասին գնալ Էջմիածին, Թիւրիմացութեան դէպքում դուք կը մասնակցէք, ճանապարհորդութիւնը ձեր հաշւով». որին ես պատասխանեցի հետեւեալը. «Ձեր պայմանները ընդունելի չեն, կարող եմ գնալ միայն ձեր հրաժարվելու դէպքում, սպասում եմ որոշ պատասխանի մինչև դեկտեմբերի 1-ը»։

4) Հայր Մկրտումեանը ասում է, որ մեր թեմ. առաջնորդից պատասխան ստացվել է դեկտ. 3-ի երեկոյեան, մինչդեռ կոնսիստորիայում սոյն պատասխանը ստացվել է դեկտ. 6-ին, երբ արդէն զրկված էի դեկտ. 11-ին Էջմիածին հասնելու ֆիզիկական հնարաւորութիւնից։

Ահա այն փաստացի անճշտութիւնները, որոնք, կրկնում եմ, այս խնդրում ունեն կարևոր նշանակութիւն, և չդիտեմ ինչ միտումներով աղաւաղված են յօդուածագիր քահանայի կողմից։

Գանք յօդուածի վերջին մասին, որտեղ ասվում է թէ՝ Ատրպատեանի հասարակութեան բանիմաց մասը անբարեական է մասամբ և ինձանից այն պատճառով, որ ես անտարբեր եմ գտնվել դէպի ինձ յանձնված գործը և չեմ վերականգնել իմ իրաւունքները, որպէս պատգամաւորի անձնափոխանորդ, հրաւիրելով այս մասին, ում հարկն է, ուշադրութիւնը։

Դա հայեացքների խնդիր է. նայած՝ թէ ով ինչպէս է նայում գործին. ես վերին ատիճանի անյարմար էի համարում թիւրահարել իմ մասին, որ ինձ զրկում են էջմիածին գնալու հնարաւորութիւնից։ Ինձ թուում էր, և հէնց այժմ էլ այն կարծիքի եմ, որ ամեն մի պարտականութիւն իմ կողմից սկսվում է այն րոպէից, երբ որևիցէ պատճառով բոլորովին վերջացած կը լինի առաջին պատգամաւորի իրաւունքները. այն, կրկնում եմ, հէնց միայն այն ժամանակվանից է սկսվում հասարակութեան ինձ վրա դրված պարտականութեան իրագործումը։

Իմ կարծիքով՝ պատգամաւորի մասնակցելու իրաւունք չունենալու մասին ժամանակին չը յայտարարելը ամբողջովին ընկնում է հէնց իրան՝ պատգամաւորի, սինոդի, որին նոյեմբերի վեսից յայտնի էր ներքին գործերի մինիստրի շրջաբերականը, և վերջապէս մեր թեմ. առաջնորդի վրա, որը վաղօրօք հաստատելով Էջմիածին՝ տեղեկացել էր այդ բոլորի մասին։

Ն. Աւագեան

Գանձակ, 1 փետրվարի

Ցայտնում եմ ի գիտութիւն Գանձակի ս. Լուսաւորիչ եկ. դպրոցի հոգաբարձութեան, որ «Մշակի» վերջին համարներից մէկում յիշեալ դպրոցի ուսուցչական խմբի հետ ունեցած կենսալից յարաբերութեան մասին լաւ առողջ ես չեմ։

Ռուս. Աղ. Շահուարեան

ԻՆՉՈՒ Է ՎՐԴՈՎՎԵԼ ԲԱՆԱԿՆ ԻՄ ԴԷՄ

Հայ ընթերցող հասարակութիւնն անշուշտ զարմանքով նկատեց, որ այն օրից, երբ լոյս տեսան իմ գրած «Կարապետ եպիսկոպոսի կենսագրութիւնը» առանձին գրքով և յօդուածներն «Առաջիկայ հայրապետական ընտրութիւնների առիթով» «Բիւզանդիոնում» և «Մշակում», Թիֆլիսում հրատարակվող «Հօրիզոն» թերթը իր բոլոր արբանեակներով մի կատաղի արշաւանք սկսեց իմ դէմ։ Ոտքի էր կանգնեցված ամբողջ բանակը և գրողներն աշխատում էին մէկը միւսից անցնել «հարուածների» խստութեան մէջ։ Նախ սկսվեցին խմբագրութեան տափակ ակնարկները «Նախկին Երուանդ վարդապետի» կամ «հայոց եկեղեցուն հրաժարիմք ասած» Երուանդի դէմ, յետոյ երևան եկան երկու զօրեղ զրպարտիչներ—ի հարկէ կեղծ ստորագրութեամբ, ինչպէս վայել է իրանց—Պապունի և Թոդիկ, ապա օգնութեան կանչվեց պահեստից Կ. Պոլսի «Ժամանակ» թերթը, և ի վերջոյ կրկին խմբագրութիւնը մէջ եկաւ ինձ «խպառ ջարդելու» Ցովհ. Թումանեանի մի յօդուածով, մի անտառագիր «Մամուլի» բաժնով և մի առաջնորդողով։ Ես համբերութեամբ կարդացի հակառակորդներիս բոլոր գրածները. և որովհետև բաւական ժամանակ անցաւ նրանց վրայից և կրքերը փոքր ինչ հանդարտված կը լինեն այժմ, կարևոր եմ համարում ես էլ իմ վերջին խօսքն ասել այդ, իմ կարծիքով, բոլորովին անմիտ և անտեղի յարձակումների մասին։ Անմիտ և անտեղի եմ համարում այդ յարձակումներն այն պատճառով, որ նրանք մեծ մասամբ անձնական բնաւորութիւն են կրում և գործի հետ ոչ մի առնչութիւն չունեն։ Ես գրել եմ գրքոյկ և յօդուածներ կաթողիկոսական ընտրութիւնների առիթով և նրանց մէջ ոչ մի տեղ և ոչ մի կերպով չեմ յարձակվել Էջմիածնի, Ցովհ. Թումանեանի կամ մի ուրիշի վրա, թէ ինչու գուք նոյն թեկնածուին չէք պաշտպանում, ինչ որ ես, որովհետև ես լաւ հասկանում եմ, որ ուրիշների մտքի և հասկացողութիւնների վրա ճնշում գործելու փորձերը բոնութեան ձգտումից և նեղսիրտ անհամբերատար ոգուց են առաջ գալիս, որոնք ամենագժուարին արգելքներն են մարդկային առաջադիմութեան շաւղի վրա։ Իմ իրաւունքն էր միայն իմ հասկացողութիւնը պարզել կաթողիկոսութեան մասին և ցոյց տալ միևնոյն ժամանակ, թէ առաջարկված թեկնածուներից ով ինչ պատճառով անյարմար է կամ յարմար սուրբ Գրիգորը Լուսաւորչի աթոռի համար։ Ես այդ էլ արել եմ, և, կրկնում եմ, դրա մէջ ամենևին չեմ խառնել ոչ Էջմիածնի, ոչ Թումանեանին և ոչ մէկ ուրիշի։ Ուղիղ տարամարդ ամփոփելով, գրում է. «Ամեն նշաններն կը համոզեն, որ այս մատեանն գրոշմուած է Հայոց 961 թուականին, այսինքն՝ 1512 փրկչական թուականին»։

Ահա այն համբավաւոր 1512 թվականը, որ այնքան ընդհանրացել է և առիթ է ընծայել՝ ներկայ 1912-ին 400-ամեայ յոբելեան կատարելու։

Բայց ընթերցողները կը տեսնեն, որ հ. Գովրիկեանի ամփոփումը ճշտիվ չէ համապատասխանում այն դատողութեանը, որի հիման վրա նա Պարզատումարի տպվելու տարին համարում էր կամ 1512-ը կամ 1511-ը։ Արդ՝ այս երկու տարիներից ո՞րն է ավելի հավանականը։

Ցիշենք որ «այս գիրքը Պարզատումար մըն է Հայոց 961 տարւոյն» (=1512). յիշենք, որ նա տպված է այն նպատակով, «որպէսզի նշանակված 961 տարւոյն համար պատրաստ ու գործածական ըլլայ»։ Այս տրվածից և նրա վրա հիմնված բանական դատողութիւնից մենք պէտք է անխուսափելի կերպով հետևցնենք, թէ ուրեմն Պարզատումարը տպված է 1512-ից գոնէ մի տարի առաջ, 1511-ին, որպէսզի Վենետիկից կարողանար նաւերով ճանապարհորդել դէպի Փոքր Ասիայի ափերը և այստեղից կարավաններով փոխադրվել Հայաստան կամ Կիլիկիա և այստեղ գործածական դառնար 1512-ին։

Այս է օրացոյցների տպագրութեան կարգը, և այսպէս չը վարվող հրատարակիչը նիւթապէս կը տուժէր, շուկան տպրանք բերելով այնպիսի ժամանակ, երբ տպրանքն անպէտ անցել է։

Ստ. Մալխասեանց

(Վերջը միւս անգամ)

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Արքունական Թատրոնում

Շաբաթ, փետրվարի 4-ին, տեղի ունեցաւ ներկայ սեզոնի օպերային խմբի անտարբէրնեոր Ի. Պ. Պալիէվի բենեֆիսը։

Թատրոնը ծայրից-ծայր լիքը հասարակութիւնը շտապել էր վաղօրօք տոմսակ ձեռք բերել և իր ներկայութեամբ պատուել Ի. Պ. Պալիէվին, որի անխոնջ ջանքերի շնորհիւ այս սեզոնին Թիֆլիսի երաժշտասէր հասարակութիւնը ունեցաւ տաղանդաւոր և աչքի ընկնող ոյժերից կազմակերպված օպերային խումբ և վայելեց մեծ բաւականութիւն։ Մեր ասածին իբրև գրական կարող է ծառայել այն՝ որ օպերային ներկայացումներին համարեա ամեն երեկոյ թատրոնը լի է եղել երաժշտասէր ընտիր հասարակութեամբ։

Բենեֆիցիանտն այդ երեկոյ դրել էր իր բենեֆիսին Ռ. Վագների «Ծանգէյդէր» երաժշտական դրաման, որ լի է մեծ մասամբ երաժշտական մեղեդիներով և որը դրել է Վագնէր 1845 թ.։

Դրամայի բովանդակութիւնը հետեւեալն է.

Տիւրինգէնի լանդգրաֆ Գերմանի (Մոզժուխին) պալատական ասպետ՝ միևնոյն ժամանակ և՝ բանաստեղծ՝ Տանգէյզերը (Լազարեվ) երկրի վրա չը գտնելով կանացի կատարեալ գեղեցկութիւն և իսկական ջերմ սէր՝ հեռանում է երկրից և գնում Վէնէրայի (Բալիօնակայա) մօտ, ուր կարողանում է գտնել և վայելել իր փնտրածը։ Սակայն երկար չը կարողանալով մնալ այդ ցնորական աշխարհում, նորից վերադառնում է երկիր՝ լանդգրաֆի պալատը, ուր անկեղծ սիրով ողջոյնված սպասում է նրան լանդգրաֆի եղբօր-աղջիկը՝ պրինցեսի Ելիզավէտան (Ալէշկո)։ Շատ կարճառև է լինում Տանգէյզերի և Ելիզավէտայի բուռն սէրը։ Պալատականները, նոյնպէս և Ելիզավէտան, իմանալով որ Տանգէյզերը եղել է Վէնէրայի տիրապետութեան մէջ ու ճաշակել է նրա սէրը՝ համարում են նրան չար ոգով բռնված ու ծանր յանցաւոր, և որոշում են նրան գնալ Հռոմ իր մեղքերի համար թողութիւն խնդրելու։ Տանգէյզերն ասնելով ճանապարհորդական ցուպը՝ դիմում է Հռոմ, իսկ Ելիզավէտան մեկուսանալով երկրային կեանքից՝ նուիրում է իրան Աստուծուն և սկսում է աղօթել Տանգէյզերի հոգու փրկութեան համար։ Տանգէյզերը թողութիւն չը ստանալով Հռոմում՝ սրտաբեկ վերադառնում է այնտեղից և ճանապարհին շարունակ օգնութեան կանչում Վէնէրային։ Նորից երևան է գալիս Վերջինս և հրաւիրում նրան իր՝ վշտերից և չարիքներից զերծ օթեանը։ Սակայն այդ իսկ բօսէին լսվում է ազերթի մեղմաղձոտ երգասացութիւն։ Ելիզավէտայի մահացած մարմինը տանում են թաղելու։ Տանգէյզերը լսելով պալատական Վոլֆրամից (Սօլօլսկի) մեռելի ով լինելը՝ շտապեցնում է գագաղի վրա և ինքն էլ շունչը փչում։

Ցիշելով օպերան սկսվում է երկարատև ուվերտիւրայով, որի ժամանակ բենեֆիցիանտ Պալիէվ ցոյց տուեց իր հմուտ դիրիժոր լինելը և արժանացաւ բուռն ծափահարութիւնների։

Երկրորդ արարուածի ժամանակ Ի. Պալիէվ ծափահարութիւնների տարափի տակ հրաւիրվեց բեմ՝ շրջապատված օպերային ամբողջ խմբի կողմից՝ և ստացաւ թանգարժէք ընծաներ, պսակներ և ծաղկեփունջեր։

Թէ օպերան և թէ դերակատարներն իրանց խաղով թողեցին լաւ տպաւորութիւն։

Կիրակի, փետրվարի 5-ի երեկոյեան կայացաւ օպերային խմբի հրաժեշտի ներկայացումը և դրանով փակվեց այս 1911/1912 թ. սեզոնը։

X.

ԿՈՎԿ. ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ. ՈՐԲՈՒՀԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Փետրվարի 5-ին, երեկոյեան, Բարեգործ. Ընկերութեան «Ղարաջևան» հանդիսադահլիճում տեղի ունեցաւ նոյն հիմնարկութեան որբուհիների երկրորդ ներկայացումը (առաջինը փետրվ. 3-ին)։

Խաղացին որբուհիներից մէկի՝ Վ. Նալբանդեանի (Ցովհ. դպրոցի VI դաս. աշակ.) հեղինակած «Սիրոյ բանալի» դրաման՝ բաղկացած 2 արարուածից և 4 պատկերներից։ Վերջին երկու պատկերները ներկայացնում են հիւրերի աշխարհ՝ անտառը, և բեմի վրա հանդիսականների առաջ պատկերանում է մի սիրուն տեսարան, որտեղ տիրում է երգն ու խնդութիւնը։ Այդ մասը հեղինակը գրել է ոտանաւորով, և վերածել է նրան երաժշտութեան՝ որբանոցի սանուհի Ս. Մելիքեանը (Ցովն. դպրոցի VI դաս. աշակերտուհի)։

Այս վերջին մասն էլ իր տեսարաններով ու երաժշտութեամբ կազմում էր ներկայացման ամենաուշագրաւ մասը։

Դրամայի բովանդակութիւնը հետեւեալն է.

Ընտանիքի մայրը (որը Մ. Օդաբաշեան) իր զուարճութիւնների հետևից ընկած, աչքաթող է անում տունը, զաւակներին, ծանրաբեռնում հաշւապահ ամուսնուն՝ Ցովհաննէսին (որը Վ. Դաւլիշեանեան) և վերջն էլ դաւաճանում նրան։ Շնորհիւ իր ընկերոջ՝ Ցովհաննէսը ստանում է կնոջ դաւաճանութեան կենդանի ապացոյց նամակը, և թողնելով իր սիրելի՝ հրեշտակային աղջկանը, մօրը քաշած տղային, փախչում է անից։

Վերջապէս նա ընկնում է մի անտառ և հիւրերների շրջանում՝ բնութեան ազատ ծոցի մէջ գտնում է սիրոյ բանալին։

Ցովհաննէսի աղջիկ Սանդուխտը (օր. Ս. Սերովբեան) իր ջուխակն առած՝ նոյնպէս թողնում է տունը և գնում հօրը որոնելու։

Անտառի մէջ հիւրերների շրջանումն էլ նրանք հանդիպում և ճանաչում են իրար։ Հայրը վերադառնում է տուն աղջկայ հետ միասին։

Ներկայացումը անցաւ սահուն, աշխոյժ, մանաւանդ աշող էր երաժշտական մասը՝ հիւրերների երգն ու պարը։

Եւ դահլիճը խլացուցիչ միահամուռ ծափերով, ծաղկեփունջերով վարձատրեց ներկայացման առանցքը կազմող երկու որբ սանուհիներին՝ թէ հեղինակող Վ. Նալբանդեանին և թէ երաժշտութեան վերածող Ս. Մելիքեանին։

Զարմանալի ուրախալի և մխիթարական է այդ երեկոյթը որբանոցի կեանքում։

Եւ միանգամայն գովասանքի արժանի այն հոգատար նախաձեռնութիւնը, որ հրապարակ է մղել որբերի մէջ նշմարվող ընդունակութիւնները։

Երկու պլիւս է շահում դրանով Կ. Հ. Բ. Ընկ.-ը. նախ՝ որ գեղեցիկ գիտելիքներ և զուարճութիւն է մատչում որբերի մէջ, և երկրորդ՝ որ հասարակութեան ուշադրութեանն է ներկայացնում այն հոյակապ դաստիարակութիւնը, որ կարօտ է խրախոյսի, կարօտ է աջակցութեան։

Դահլիճում ասեղ գցելու տեղ չը կար. մեծ մասամբ աշ.-աշակերտուհիներ էին, կային և բաւականին թւով մեծեր, որոնց հիացմունքին չափ ու սահման չը կար։

Ցանկալի է, որ այդ առաջին օրինակն իր շարունակութիւնն ունենայ։

Լ. Դանիէլեան

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Կ. Հ. Բարեգործական Ընկերութեան դահլիճում փետրվարի 3-ին տեղի ունեցաւ մի խիստ հետաքրքրական և բացառիկ ներկայացում։

Խուդադեան որբանոցի սանուհիները խաղացին «Սիրոյ բանալի» անունով մի թատերական պիէս 2 գործողութեամբ և 4 պատկերով, երաժշտական բաժինով և պարերով։

Այդ մանկական երեկոյթի աղը այն էր, որ թատերական գրուածքի և նրա երաժշտական մասի հեղինակները նոյն որբանոցի սանուհիներն էին՝ Վարսենիկ Նալբանդեան և Սիրանոյշ Մէլիքեան՝ Ցովհաննէսեան դպրոցի VI դասարանի աշակերտուհիներ, որոնցից առաջինը արդէն մի տարի է, որ բանաստեղծական բնածին շնորհով ոտանաւորներ է գրում (մի ոտանաւորը «Այն ով է լալիս, այն ով է ողբում

8—2

КАКАО ВАНЪ-ГУТЕНА

(М. 13657)

Главный складъ у Торговаго Дома Гебертъ фонъ ШВАРЦТАЛЬ и К-о, Одесса.

բանութիւնը և աղնիւ հրապարակախօսութիւնն էլ պահանջում են, որ հակառակ կարծիք ունեցողները նոյնպէս վարվեն։ Եթէ նրանց շատ մեծ, անդիմադրելի հաճոյք էր պատճառում անպատճառ իմ յօդուածների և գրքի առիթով գրել կաթողիկոսական հարցի մասին, դրա դէմ ես ոչինչ չունեմ, բայց այդ դէպքում էլ նրանց պարտաւորութիւնն էր հերքել իմ զրածները, ցոյց տալ իմ սխալները, այլ ոչ թէ իմ անձնաւորութեան դէմ ելնել իրանց հին, մաշված, ազդեցութիւնը կորցրան զէնքերով։ Աղնիւ հրապարակախօսութեան ճանապարհը թողած՝ «Հօրիզոնի» խումբը վերջին միջոցը ձեռք առաւ, այն նպատակով՝ որ ինձ վարկաբեկ անելով՝ հասարակութեան աչքում թուլացնել կարողանայ իմ գրածների արժէքը։ առանց հակառակելու, որ գրված և ընդհանուրի սեփականութիւն դարձած ճշմարտութեան արժէքը անձնական վարկաբեկումներով թուլանալ կարող է միայն տկարամիտների աչքում, իսկ խոհուն, խելահաս ընթերցողի պահանջն է այդ դէպքում փաստերի և իրականութեան վրա հիմնված հերքում և ուրիշ ոչինչ։

Անձնական խնդիրներով հասարակութեանն զբաղեցնելը մեզանում սովորական է դարձել։ ես չեմ կամենում այդ անել, այդ պատճառով էլ կարճ կը կտրեմ, ակամայից պատասխանելով միայն իմ դէմ եղած անարդար և զրպարտողական յարձակումներին և կանգ առնելով միայն հասարակական նշանակութիւն ունեցող կէտերի վրա։

1) Ցայտնի է, որ Գ. Պապունի և Թոդիկ կեղծանուն պարոնները իմ գրածների առիթով տերի և զրպարտութիւնների մի շարան հիւսեցին «Հօրիզոնի» էջերում կարապետ եպիսկոպոսի հասցէին։ «Հօրիզոն» թերթը իր 1911 թ. հոկտ. 7-ի № 220-ի առաջնորդողում գրում էր. «Կարապետ եպիսկոպոսի մասին մի յօդուած հրատարակվեց Գ. Պապունի ստորագրութեամբ։ Մենք այդ յօդուածին տեղ տուինք, աչքի առաջ ունենալով որ ամբողջովին փաստերից էր բաղկացած, չը նայելով որ դրանց մէջ տխուր փաստեր շատ կային։ Կարապետ եպիսկոպոսի պաշտպաններից ո՞վ էլ ուզում էր, կարող էր դուրս գալ այդ փաստերը հերքելու, եւ մենք սիրով տեղ կը տայինք հայ եպիսկոպոսի արատը սրբող տողերին... և այլն»։ Ես այնքան միամիտ գտնվեցի, որ հաւատացի «Հօրիզոնի» ղեկավարների անկեղծութեանը և ընդարձակ (այսինքն 2 անգամ աւելի, քան Պապունու և Թոդիկի յօդուածներն էին), փաստալից, ամեն ինչ մանրամասն ստուգված հերքում ուղարկեցի «Հօրիզոնի» խմբագրութեանը, յիշեցրի իրանց առաջնորդողը և խնդրեցի զետեղել յօդուածս «Հօրիզոնի» մէջ։ Խմբագրութիւնը՝ մոռացած իր հրապարակային խոստումը և տարրական արդարութեան պահանջը, անտի պատճառաբանութիւնով (ես խնդրել էի առանց կրճատումների տպել՝ աղաւաղումներից խոյս տալու համար, իսկ խմբագրութիւնը հէնց այդ չէ կամեցել անել) մերժեց յօդուածս տպել «Հօրիզոնի» էջերում եւ դրանով ստիպեց ինձ ուրիշ թերթի օգնութեանը դիմելու ոտնահարված արդարութիւնը վերականգնելու համար։ Ի՞նչ է այդ վարմունքի իսկական անունը— վարկաբեկիչ տեր և զրպարտութիւններ տպել մէկի հասցէին կեղծ անուն ներքոյ անընդհատ՝ մինչև այսօր, իսկ իսկական ստորագրութեամբ փաստալից հերքում չը տպել—ես թողնում եմ որոշելու անաչառ հայ հասարակութեանն ու մամուլին։ Ինքս բաւականանում եմ արձանագրելով միայն «Հօրիզոնի» խմբագրութեան բարոյական հակացողութիւնները բնորոշող այս մեկ փաստը։

Թողնենք այս ուրեմն և անցնենք հօրիզոնական միւս յարձակումներին։

Եր. Տէր-Մինասեան

(Չը շարունակվի)

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Մինիստրների խորհրդի նիստում պատգամաւոր Գոլոլոբովի բողոքի առիթով Կոկովցեվը խօսեց այն մտքով, որ Պետական Դումայի անդամները բնաւ պատասխանատու չեն կարող լինել իրանց ճառերի համար։ Շչեգլովիտովը խօսեց հակառակ իմաստով։ Խորհուրդը իրան ձեռնտու չը ճանաչեց վճռելու այդ հարցը։ Գործը յանձնվում է Պետական Խորհրդի առաջին դեպարտամենտին։

✦ Մինիստրների խորհուրդը մերժեց երկրագործութեան գլխաւոր կառավարչի առաջարկութիւնը՝ թոյլ տալու օտարերկրեայ դրամատէրերին Թուրքեստանի ոռոգիչ աշխատանքների մասնակցութեան։

✦ Ամերիկայի հետ առևտուր. պայմանագիրը խզելու պատճառով վճռված է էժան կրէդիտ կազմակերպել բամբակագործներին և Պետական Դումային օրինագիծ ներկայացնել՝ յատկացնելու դրամներ ամերիկական գործիքները տեղական գործիքներով փոխարինելու ծախքերի համար։

✦ Օդեսայից «Բ. Сп.»-ին հեռագրում են. «Իշէտի սպանութեան գործի առիթով վկայ կանչված Նախկին ոստիկանապետ Կուբլիցկին սենսացիոն նորութիւն յայտնեց, թէ իրան յայտնի է, որ «Յօմաչէվեան ժամանակներում» ձերբակալվածները գնդակահարվում էին նախ քան դատվելը։ Ինքը Կուբլիցկին քանիցս իր հրաժարականից յետոյ տեղեկացնում էր ոստիկանութեան դեպարտամենտին այդ գնդակահարութիւնների մասին, սակայն նրա յայտարարութիւններին այն ժամանակ ընթացք չը տրվեց։ Լուրերի համաձայն, Կուբլիցկին պատմել է նոյնպէս, որ գնդակահարվել են նաև ձերբակալվածներ ոստիկանների ձեռքով, իսկ գեներալ Յօմաչէվը ոստիկանութեան դեպարտամենտին հաղորդում էր, թէ այդ բանտարկեալները սպանվեցին փախուստի փորձի ժամանակ»։

✦ Ռուս նացիոնալիստների համագումարը նշանակված է Պետերբուրգում փետրվարի 19-ին։

✦ Կիէվից հեռագրում են. «Իւշչինսկիին սպանող Բէյլիսին պաշտպանողները միջնորդում են կանչելու 150 վկաներ։ Շչեգլովիտովի ցանկութեամբ նիստերը լինելու են դռնփակ»։

✦ Կովկասի Փոխարքայի կարգադրութեամբ յայտնի աւազակապետ Զելիմ-խանի բոլոր ազգականները Զելիմ-խանին պատսպարելու համար աքսորվում են Ռուսաստանի կենտրոնական նահանգները։

✦ Աբբեկ Զելիմ-խանի նկատմամբ Զիչնիայի շէյխերը բաց են թողել մի կոչ, որով յորդորում են ժողովրդին սպանել Զելիմ-խանին, որովհետև նրա գործողութիւնները հակառակ են Շարիաթին և որ այդօրինակ սպանութիւնը Աստուծոյ կողմից յանցանք չի սեպվի, այլ ընդհակառակն սպանողը Աստուծուց կը վարձատրվի։

✦ Օնեգայից (Արխանգելի նահանգ) մեզ գրում են, որ այնտեղ աքսորվածներից մի քանի ուսանողներ և ուսանողուհիներ, կառավարութեան թոյլտուութեամբ, յունվարի 20-ին ճանապարհվել են արտասահման։

✦ Շօա-Սալթանէի դէմ դուրս եկան Թէհրանից 275 մուջահիդներ։ Սամադխանը Թաւրիզում կազմակերպում է ձիաւորների խումբ քիւրդերից։

✦ Աստրաբադի ռուսաց հիւպատոսը, Թէհրանի միսսիայի պատուիրագրութեան համաձայն, գնաց Գիւմիւշ-Թափէ Մահմէդ-Ալիի մօտ յայտնելու նրան ռուսաց, անգլիական և պարսից կառավարութիւնների վճիռը, որով էկս շահին առաջարկվում է ստանալ իրան նշանակված կենսաթոշակն ու ընդմիշտ հեռանալ Պարսկաստանից։ Դեռ Մահմէդ Ալին իր պատասխանը չէ ուղարկել։

✦ Պարիզում «մարդու իրաւունքների լիգայի» կազմած միտինգին Պէսանսէն ի միջի այլոց ասաց. «Եւրոպան չը պէտք է խաղայ մահմեդական ֆանատիկոսութեան կրակի հետ, որի բոցը դիւրութեամբ կը բռնկվի։ Այդ բոցի բռնկումները միատեսակ սպառնում են Աստուծոյ, Ֆրանսիային և Ռուսաստանին աշխարհի զանազան մասերում։ Մահմէդականների այդ սիստեմատիկ զրգռման մէջ է աշխարհային ահարկու միջադէպերի սաղմը»։ Սոցիալիստների կուսակցութեան պատգամաւոր Ժան Լօնգէն մասնանշեց, որ Պարսկաստանը էժան գնով չի տայ իր ազատութիւնը»։

✦ Ցանկանալով իր կողմը գրաւել ազդաբնակութեան համակրութիւնը, թիւրքաց մինիստրների խորհուրդը լուրեր է տարածում, թէ իբր ամիսիա է տալու քաղաքական յանցաւորներին։

✦ Բ. Դուրը իր դիւանագիտական ներկայացուցիչների միջոցով սպառնում է մեծ պետութիւններին, որ եթէ պատերազմական գործողութիւնները Կարմիր-ծովում շարունակվեն, նա կը փակէ իտալական բոլոր ֆինանսական ու այլ հաստատութիւնները Թիւրքիայում։

✦ Թիւրքաց «Մ. Ա.» կոմիտէն նախընտրական ագիտացիայի համար յատկացրել է 6 միլիոն ֆրանկ. և այդ այն ժամանակ, երբ Հայաստանում սով է տիրում։

✦ Իւանշիկայը Սունեատսէնին հանրապետութիւն հաստատելու հրովարտակի առիթով հեռագրեց.

«Այն գործը, որի համար դուք կըռւում էիք տարիներ շարունակ, վերջապէս յաղթանակեց։ Այն օրը, երբ կը մարէ աբսոլիւտիզմը, հանդիսանում է միևնոյն ժամանակ հանրապետութեան ծննդեան օր։ Դոհունակութեամբ յարգանք եմ մատուցանում նոր ըէժիմին։ Միապետութիւնը չքացաւ յաւիտեան, իսկ հասարակապետութիւնը կապրէ ընդմիշտ»։

✦ Անգլիական և ֆրանսիական մամուլը սրտանց ողջունում են չինական հանրապետութեան հաստատութիւնը։

✦ Պէկինից հեռագրում են, որ այրի կայսրուհին գահից հրաժարվելու հրովարտակը ստորագրեց Իւանշիկայի սպառնալիքների ազդեցութեան տակ։

✦ Նանկինի կառավարութիւնը մի խումբ անգլիացի և եապօնացի դրամատէրերից փոխարինաբար վերցրեց 20 միլիոն տաէլ։

✦ Բէլգիական մամուլը գրում է, թէ չինական մասսաները շատ ագէտ են, ուստի և նոր ըէժիմը հազիւ թէ հաստատուն լինի։

✦ Եապօնական մամուլը նախատեսում է լուրջ բարդութիւններ։

✦ Անգլիայում կօօպերացիայի հրակայական ամման մասին պերճախօսում են այս թուերը. կօօպերատիվ ընկերութիւնների թիւը հասել է 1500-ի, անդամների թիւը՝ 2.500,000-ի։ Տարեկան ընդհանուր շրջանառութիւնը հաւասարվում է 1.300,000,000 ռուբլու, սպառողական կրպակների շրջանառութիւնը՝ 700,000-ի։

✦ Վիէննայի ժողովրդական օպերային թատրոնը պայմանագիր է կապել Շալեապինի հետ մարտ ամսում երեք ներկայացում տալու՝ ամեն մինը 16,000 կրոն վճարով։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

4 փետրվարի

ՊԱՐԻԶ։ Ֆրանսիական կառավարութիւնը տեղեկացրեց ռուսաց դեսպանին, որ վճռել է վերադարձնել Սէվաստոպոլ այն ոսկեայ խաչը, որ գտնվում է Պարիզի Թանգարաններից մինում Ղրիմի պատերազմի ժամանակից։

ԿԻԵՎ։ Կայսրի, պրինց Լիւդվիգի և պրինցուհի Թէրէզայի ներկայութեամբ ծով իջեցվեց նոր զրահանաւ «Պրինց-Բեգէնտ Լուիտպոլդ», որ փոխարինում է «Օչին» զրահանաւին։

ԼՕՆԴՕՆ։ Օդաչու Վիլմուրը Բիչմնդում ընկաւ և մեռաւ։

ՊԱՐԻԶ։ Ֆրանսիայի քաղաքագլուխների կոնգրէսը խօսեց ի նպաստ քաղաքագլուխների իրաւունքների ընդլայնման և քաղաքային ինքնավարութիւնների մեծ ինքնուրոյնութեան։

ԿԻԵՎ։ Այրվեցին Լիպովց քաղաքի լաւագոյն խանութները։ Վնասները 250,000 ռուբլի են։

Կարաշին գիւղում գազանաբար սպանել են մի գիւղացու, որա կնոջը, որդուն և հարսին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետական պաշտպանութեան դումայական մասնաժողովը ընդունեց ծովային մինիստրութեան նախահաշիւը բիւջէտային մասնաժողովի որոշած գումարներով։ Նոյն մասնաժողովը այժմ քննում է ժող. լուսաւորութեան նախահաշիւը։

5 փետրվարի

ԲԷԼԳՐԱԴ։ Ռուսական առևտրական մասնաժողովը եկաւ սերբական շուկայի հետ ծանօթանալու և պարզելու համար թէ ինչ չափով հնարաւոր է Սերբիա արտահանել ռուսական առևտրի մթերքները։ Դեսպան Հարտվիգի մօտ տրվեց թէյ հիւրերի համար։ Ներկայ էր մինիստր-նախագահը։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Ուչէն բերդի մօտ երկու գնացքների ընդհարման ժամանակ սպանվեցին 4, վիրաւորվեցին 15 մարդ։

ԻՐԿՈՒՏՍԿ։ Երէկ ժամը 8¾-ին երկրաշարժ զգացվեց երկրաշարժ։

ԿԻԵՎ։ Իւշչինսկիի սպանութեան գործի առիթով կարևոր գործերի քննիչի կարգադրութեամբ հարցաքննութիւնից յետոյ ձերբակալվեց խուզարկու բաժանմունքի պաշտօնանկ պետ Միշչուկը։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ։ Ալէքսանդրովսկում 3 զինված մարդ կողոպտեց Էկպի գործարանի գրասենեակը։ Յափշտակվեց 4175 ր.։ Հետապնդման ժամանակ թեթև վիրաւորվեցին մի քաղաքապահ ոստիկան, մի երեխայ և մի բանւոր։ Ծանր վիրաւորվեցին 2 հոգի։

ԿԻԵՎ։ Կարաղին գիւղում մի ընտանիքի սրի քաշող ոճրագործը ձերբակալվեց. նա սպանվածների ազգականն է։

ՏՕԿԻՕ։ Լրագիրները համակրական յօդուածներ են նուիրում Նիկոլայ արքեպիսկոպոսին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դեղեցկութիւնը բարձր կատարելութեան է հասած։

№4711 ՎԱՐԴԻ ԲԻՒՐԵՂԵԱՅ ՍԱՊՕՆԸ

երեսի կաշուն և գոյնին տալիս է այն քնքշութիւնը, վարթութիւնը և առաձգականութիւնը, որոնք համարհում են ամենաբարձր գեղեցկութեան իսկական նշանները։ Գնորը 25 կօպ.։ Կայ ամենուրեք։

Ֆերդ. Միւլգենս պարֆիւմէրիա № 4711

Կէօլն-Բէյնի վրա։ Բիւրա հիմնված 1792 թ.։



(М. 28759/28782) 8—3

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուվիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

ԱՄԵՆ or, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-Ի ՆԵՐՍԲՍԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վիներական (սիֆիլիս) հ.։

Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9—10 ժ. ներքին և երեխայոց հիւ.։

Գ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վիներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։

Գ. Ե. ԳՈՒՐԳԻՆՕՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկաճառ.։

Ի. Ա. ՖՐԱՆԳ—9—2 ժ. ատամների բուժումն, լցնելը (պլոմբա) և արհեստական ատ.։

ԵՐԵՆԿՈՆԵՐԸ

Ի. Ա. ՖՐԱՆԳ—5—7 ժ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։

Վճարը 50 կ.։ Հրաւոները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Գ. Նաւասարդեան

1. 0—12

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Մասնագէտ սիֆիլիս (ՏՕՇ), միզասեռական վիներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։

Ընդունե. (12½—2 ժ. ցերեկվայ։
լուծիլը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ առ. ժ. 9—10-ը։

Սօլոլակ, Բէրուսովսկայա, № 33 (ռնիւեն Պաստէվիչի փողոցի)։ Տէլէֆոն № 1175.

(Ե. հ.կ.) 888. 100—63

ԲԺԻՇԿ

Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒՐԱՐԵԱՆ

(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)

Ներքին և երեխայոց հիւանդութիւններ

(Մասնագիտ. ԹՈՔԵՐԻ հիւանդութիւններ)

Ընդունե. (առաւօտեան ժ. 12—1-ը։
լուծիլը (երեկոյեան ժ. 4—6-ը։

Բէրուսովսկայա, № 66.

(շ.հ.) 130. 100—69

ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ ՁԱՂ ՄԱՐԴԻԿԸ

ՈՐՊԷՍԶԻ ՆԻՀԱՐԵՆ,

գործ են ածում միակ փորձված «Դ-ր Մարկօնի դեղափշնն»։ Զը պէտք է փորձեր անել զանազան անյայտ և բէկամի առարկայ գեղերի հետ, որոնք մնասում են առողջութեանը և չեն հետազօտված գիտութեան կողմից։

Դ-ր Մարկօնի դեղափոշին միշտ օգնում է և երբէք մնաս չէ առաջացնում։ Նա գովարանված է գիտութեան ներկայացուցիչների կողմից։

Ծախվում է Ռուսաստանի բոլոր դեղատներում և դեղատնային խանութներում։

Իսկականը միայն «Ֆակիր Ընկ. Բերլինում» ֆիրմ. մարկայով, որ գտնվում է իւրաքանչիւր արկղիկի վրա։

Արկղիկի՝ մի ամիս բաւականացող՝ գինը 3 ր., երբեակ մնծութեանը՝ 7 ռուբ.։

Դիմաւոր պահեստ ամբողջ Ռուսաստանի համար. MOCKBA. E. BEBERЪ. Покровка, д. Арбатскихъ.

(Ե.) (М. 488975) 10—7

Շտապով վաճառվում են

ՁԵՂԱԾ ԷԺԱՆ ԳՆՈՎ

10.000,000

Գեղարուեստ. բացիկներ՝ արտասահմ. շքեղ գործ զատկական, սիրային տեսար., կանացի գլուխներ, լանդշաֆտներ, պէյզաժներ, Տրէտեակովի գալերէյում, պարիզեան սալօնը և այլ հետաքրք. տեսար.։ Ծանուցի համար պօստով ուղարկում ենք 100 հատ՝ 1 ր. 25 կօպէկով. 200 հատ 2 ր. 25 կ., 300 հ. 3 ր. վերագրելի։ Բարեքանչութիւնը հարիւրեակը ունի 100 առանձին նկարներ։ Միանգամից մեծ պատուէր տալուց խոշոր զեղչ։ Պատկերազարդ պրէյսկուրանտն ուղարկում ենք պատուէրի հետ միասին։ Հասցէագրել՝ Эксп. дому Художеств. откр. писемъ Зигмунта Розенталя, г. Лодзь, № 21.

(1, 7, 11) (Л. 8) 4—3

ԼՈՅՍ է ՏԵՍԵԼ երկրորդ տպագրութեամբ

ՁԵՌՆԱՐԿ ԹԵԼԱԴՐՈՒԹԵԱՆ

և ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆ

բոլորովին բարեփոխած և ընդարձակած.

Գինն է 15 կօպ.

Պատուէրները կարելի է ուղարկել այժմեանից։ Դիմել՝ Александрополь, учителю М. Тарахчіанъ. (Հ.) 74. 2—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.